

Վճարային քարտեր

Կյանքի իրավիճակ

Արամը 19 տարեկան ուսանող է: Նա պետք է ստանա գերազանցության կրթաթոշակ, բայց համալսարանն այն փոխանցում է միայն անկանխիկ տարբերակով: Արամը հասկանում է, որ ժամանակն է բանկային քարտ ունենալու, սակայն լիովին չի պատկերացնում, թե ինչ է դա և ինչպես է այն աշխատում:



Արամ. Գուրու, բոլորն ասում են՝ «քարտ բացիր», բայց ինչ է իրականում բանկային հաշիվը կամ բանկային քարտը:



Ֆինանսական գուրու. Պարզ ասած, բանկային հաշիվը քո ապահով «դրամապանակն» է՝ դրված բանկում: Կարող ես ցանկացած պահի գումար ավելացնել, կանխիկ հանել կամ փոխանցումներ ստանալ: Իսկ բանկային քարտը պարզապես գործիք է, որ քեզ թույլ է տալիս օգտվել այդ հաշվից. վճարել խանութներում, առցանց գնել դասագրքեր, ստանալ կրթաթոշակ, մարել վարկ կամ կատարել կոմունալ վճարումներ՝ առանց բանկ գնալու:

Արամ. Իսկ անկանխիկ վճարելը միայն հարմարությունն է, թե՛ իրական օգուտ էլ ունի:

Ֆինանսական գուրու. Շատ ավելին է: Անկանխիկ վճարումները խնայում են քո ժամանակը, ուժը ու նյարդերը: Պատկերացրու, որ ուսման վարձը պետք է վճարես. կանխիկով պիտի գնաս բանկ, հերթ կանգնես, ապա հետո վճարումը կատարես, իսկ անկանխիկով դա անում ես մեկ սեղմումով: Բացի այդ՝ կտրոնները պահվում են հեռախոսում, ստանում ես վեդճեր, բոնուսներ, քեշբեք: Ամենակարևորը՝ քո գումարները դառնում են ավելի անվտանգ:

Արամ. Իսկ բանկը ինձնից գումար կվերցնի, եթե անկանխիկ վճարեմ:

Ֆինանսական գուրու. Ոչ միշտ: Եթե խանութում գնում ես կատարում կամ հեռախոսային հավելվածով (մոբայլ բանկինգով) ուսման վարձ ես փոխանցում այլ հաշվի, սովորաբար միջնորդավճար չկա: Բայց եթե, օրինակ, քո քարտից այլ քարտի ես գումար փոխանցում կամ հարկ ես վճարում մոբայլ բանկինգով, միջնորդավճար կարող է լինել: Բանը կամ մոբայլ բանկինգը գործարքի պահին ցույց է տալիս վճարի չափը, ու դու ինքդ որոշում ես՝ արժե՞, թե՞ ոչ:

Արամ. Ո՞ր դեպքերում է պարտադիր անկանխիկ վճարելը:

Ֆինանսական գուրու. Օրենքով որոշ գործարքներ պետք է անես միայն անկանխիկ: Օրինակ՝ ուսման վարձը, բժշկական ծառայությունները, վարկի մարումները, նոտարի վճարները: Պարտադիր է անկանխիկ ստանալ նաև աշխատավարձը, կրթաթոշակը և ապահովագրական հատուցումները:

Արամ. Ինչ տեսակի բանկային քարտեր կան:

Ֆինանսական գուրու. Արի միասին ուսումնասիրենք:

- **Դեբետային քարտ.** ծախսում ես միայն այն գումարը, որը ունես հաշվիդ: Ուսանողի համար սա ամենահարմար տարբերակն է:
- **Վարկային քարտ.** բանկը տալիս է վարկային գիծ, որը կարող ես օգտագործել ու հետո վերադարձնել՝ տոկոսով կամ առանց տոկոսի՝ կախված պայմաններից:
- **Հաշվարկային քարտ.** համատեղում է դեբետային ու վարկայինի հնարավորությունները:
- **Տեղական քարտ ArCa.** այս քարտերով կարող ես գործարքներ անել Հայաստանում:
- **Միջազգային քարտեր (Visa, MasterCard, American Express).** այս քարտերը կարող ես օգտագործել Հայաստանում և արտասահմանում:
- **Թվային քարտեր.** բազմիցս տեսած կլինես ֆիզիկական քարտերը, որով մարդիկ վճարում են խանութներում, գումար կանխիկացնում: Թվայինը կարծես նույնը լինի, բայց քո հեռախոսում միայն, այն ֆիզիկապես գոյություն չունի: Այն ունի քարտի բոլոր տվյալները՝ քարտի համար, ժամկետ, CVV: Կարող ես առցանց գնումներ անել առցանց խանութներում կամ անհպում վճարել (NFC, հաճախ սխալմամբ անվանում են wifi-ով քարտ) խանութներում: Այն չի կարող կորել կամ գողացվել, բայց ունի սահմանափակում. կանխիկ գումար հանելը կարող է բարդ լինել, օրինակ՝ միջնորդավճարներ լինեն:

Արամ. Մի քիչ կպատմե՞ս NFC-ի մասին:

Ֆինանսական գուրու. NFC (Near Field Communication) թույլ է տալիս պարզապես մոտեցնել քարտը կամ հեռախոսը POS տերմինալին և վճարել՝ առանց սարքին հպվելու: Առավելություններ՝ արագություն և հարմարություն: Նախապզուշացում. սահմանում ես գումարի շեմ (օրինակ՝ մինչև 20,000 դրամ), որի դեպքում կարիք չկա PIN-կոդը հավաքել, սակայն ավելի մեծ գումարների դեպքում պահանջվում է PIN: Միշտ հետևիր անվտանգության կանոններին՝ մի մոտեցրու հեռախոսը անձանոթ սարքերին, ակտիվացրու լրացուցիչ անվտանգության մեթոդներ (հեռախոսի մատնահետք կամ գաղտնաբառ):

Արամ. Ես նոր եմ սկսում, հր քարտն է ճիշտ ինձ համար:

Ֆինանսական գուրու. Ֆինանսական գուրու. Նախ մտածիր, թե որտեղ ես օգտագործելու.

- Եթե միայն Հայաստանում ու հիմնականում ուսման վարձի, կոմունալների ու առօրյա գնումների համար ես օգտագործելու, ընտրիր ArCa քարտ:
- Եթե հաճախ առցանց գնումներ ես անում, մտածիր վիրտուալ կամ թվային քարտի մասին:
- Եթե ուզում ես արտասահմանում օգտագործել, ավելի հարմար են Visa-ն կամ MasterCard-ը:

Հիշիր՝ fininfo.am կայքը թույլ է տալիս համեմատել բոլոր բանկերի քարտերը մեկ հարթակում:

Արամ. Իսկ քանի տարեկանից է հնարավոր Հայաստանում քարտ ունենալ:

Ֆինանսական գուրու. 14 տարեկանից: Այդ պահից կարող ես բացել հաշիվ, ստանալ քարտ ու արդեն սովորել պատասխանատու ֆինանսական վարքագիծ: Բայց կան բանկեր, որոնք պատանիների համար հատուկ քարտեր են թողարկում: Դրանք կցված են ծնողների հաշիվներին և հնարավորություն են տալիս կատարել սահմանափակ թվով գործարքներ:

Արամ. Իսկ ինչին պետք է ուշադրություն դարձնեմ քարտ ընտրելիս և օգտագործելիք:

Ֆինանսական գուրու. Քարտ ընտրելիս միշտ հաշվի առ՝

- Վճարները՝ թողարկման, սպասարկման, բանկոմատից կանխիկացնելու միջնորդավճարները:
- Քարտի արժույթը՝ դրամ, դուլար, եվրո:
- Քեշբեքի, բոնուսների և այլ հնարավորությունները: Օրինակ՝ քարտեր կան, որոնք օգնավակայանների հանգստավայրերում մնալու հնարավորություն են տալիս:

Օգտագործելիս միշտ հետևիր անվտանգության կանոններին. PIN-ը պահիր գաղտնի, քարտը չթողնես ուրիշի ձեռքում, ստուգիր քաղվածքը և գործարքների պատմությունը, և կասկածելի գործարքների դեպքում անմիջապես տեղեկացրո՛ւ բանկին:

Արամ. Ի՞նչ են նշանակում քարտի վրայի տվյալները:

Ֆինանսական գուրու. Քարտի վրա գրվում է քարտի 16-19 նիշանոց համարը, որը քարտի հաշվեհամարը չէ: Հաշվեհամարը պայմանագրում է նշվում, կարող ես գտնել նաև մոբայլ բանկինգում: Հաշվեհամարով կարող են թեյ գումար փոխանցել, բայց կարող են նաև քարտի վրայի թվերով անել դա: Վերջինս ավելի արագ է, բայց ունի միջնորդավճարներ:

Քարտի վրա գրվում է նաև, թե մինչև երբ կարող ես քարտն օգտագործել (վավեր է մինչև), քո անուն ազգանունը: Քարտի վրա կամ քարտի հետևում CVV կոդն է լինում: Այս տվյալները պետք են առցանց գնումներ կատարելիս, եթե միասին բացահայտես, կարող ես օգնել, որ քո անունից գնումներ անեն:

Արամ. Այնքան շատ կողեր կան, կարճիդ ես դրանց տարբերությունը բացատրել:

Ֆինանսական գուրու. Արժի բացատրեն:



- PIN` քո անձնական նույնականացման կոդը (հնգանիշ/քառանիշ)` բանկումատում կամ POS-ում մուտքագրելու համար: Գաղտնի պահիր:
- OTP (One-Time Password) ` միանգամյա կոդ, որը SMS-ով կամ հավելվածով ստանում ես առցանց գործարքները հաստատելու համար: Միայն այդ պահին է օգտագործվում:
- Բանկային գաղտնաբառ` բանկի հետ պայմանավորված թիվն է, որ երբ գանգես բանկ, թեզ հարցնես, իմանան, որ հաստատ դու ես. ճայ, ճայ, բազեն է
- CVV` քարտի վրա 3-4 նիշ, օգտագործվում է առցանց գործարքների համար` լրացուցիչ պաշտպանության նպատակով:

Արամ. Իսկ հեռախոսով կարող եմ վճարել՝ առանց քարտ վերցնելու:

Ֆինանսական գուրու. Այո: Google Pay (Android) և Apple Pay (iPhone) էլեկտրոնային դրամապանակները թույլ են տալիս թվայնացնել քո քարտը հեռախոսի կամ ժամացույցի մեջ և NFC-ով վճարել: Անհրաժեշտ է.

- Ներբեռնես հավելվածը և կցես քարտդ,
- Հեռախոսդ և քարտդ ունենան NFC,
- Անվտանգ անհատականացումը (մատնահետք/Face ID/գաղտնաբառ) լինի ակտիվ:

Վճարն իրականացվում է՝ հեռախոսը մոտեցնելով տերմինալին պահանջված նույնականացումը (Face ID, մատնահետք կամ պարզապես հեռախոսի ապաբլոկավորում) անցնելուց հետո:

Արամ. Քեզբեք՝ ինչպե՞ս է «վերադարձը» աշխատում:

Ֆինանսական գուրու. Պատկերացրո՛ւ, որ գնում ես անում, գումարի մի մասը հետ է նստում քարտիդ: Օրինակ՝ 2% քեզբեք 20,000 դրամ գնում կատարելուց հետո 400 դրամ վերադարձ: Քեզբեք ստանալու համար պարզապես վճարի՛ր համապատասխան քարտով և սպասի՛ր, որ բանկը քեզ վերադարձնի խոստացված չափով գումարը որոշ ժամանակ հետո: Պայմանները տարբեր են. ոչ ամեն տեղ է գործում:

Արամ. Ի՞նչ կանոնների պետք է հետևեմ՝ քարտս անվտանգ օգտագործելու համար:

Ֆինանսական գուրու. Կան մի քանի պարզ կանոններ.

- Բանկումատից գումար կանխիկացնելու ժամանակ ուշադիր եղիր, որ ոչ ոք չտեսնի մուտքագրվող տվյալները. ձեռքով ծածկիր ստեղնաշարը, երբ հավաքում ես PIN-կոդը: Տեղադրիր քարտը ճիշտ դիրքով, իսկ եթե տեսնում ես կանկածելի սարքավորում (ստեղնաշարի վրա երկրորդ ստեղնաշար, քարտը մտցնելու վայրում սկան անող երկրորդ սարք), ապա մի օգտագործիր:
- Խանութում գնումներ կատարելիս՝ ստուգիր գումարի չափը քարտը մոտեցնելուց առաջ, կտրոնով նորից ստուգիր գումարը, մի տուր քարտդ այլոց՝ վճարելու համար:
- Առցանց գնումներ կատարի՛ր միայն ճանաչված կայքերում, մի վստահիր սոցիալաթակներում և այլ կերպ եկած զանազան գովազդներին: Ստուգիր այլ օգտատերերի թողած կարծիքները:
- Մի փոխանցիր քարտի գաղտնի տվյալները ոչ ոքի: Եթե քարտիդ հետ կապված որևէ կասկած կա, անմիջապես արգելափակիր քարտը բանկի հավելվածով կամ զանգով:

նաև բարձր եկամուտ ստանալու շանս, ապա դա նշանակում է՝ ունեն ռիսկի «բարձր ախորժակ»: Այս դեպքում բաժնետոմսերը կարող են լինել քո ընտրությունը: Իսկ եթե ցանկացած կորուստ քեզ անհանգստացնելու է, ապա նշանակում է՝ քո ռիսկի ախորժակը ցածր է, և ավելի հարմար տարբերակներ կլինեն պարտատոմսերն ու ավանդները:

Բայց ամեն դեպքում հիշիր. դիվերսիֆիկացիան կարևոր է բոլորի համար: Նույնիսկ բարձր ռիսկ սիրող ներդրողները իրենց պորտֆելում ունենում են ավելի ապահով գործիքներ՝ անվտանգության համար, իսկ ցածր ռիսկ նախընտրողները փոքր չափով ունենում են ռիսկային ներդրումներ՝ ապագա եկամուտ ապահովելու համար:

Ուրեմն, երբ արդեն հասկացել ես քո **ռիսկի ախորժակը**, հաջորդ քայլը կլինի մտածել՝ իսկ ինչպես կարելի է այդ ռիսկերը կառավարել: Այստեղ է կարևոր դառնում **բազմազանեցումը կամ դիվերսիֆիկացիան**: Դա շատ պարզ կարելի է ասել այսպես՝ «բոլոր հավկիթները մի պամբյուղում մի դիր»: Այս սկզբունքը թույլ է տալիս, որ եթե մի ներդրում ծախողվի, մյուսները պահպանեն քո պորտֆելի կայունությունը:

Պատկերացրու՝ գնել ես մեկ ընկերության բաժնետոմսեր, և այդ ընկերությունը հայտնվել է ֆինանսական ծանր վիճակում: Այդ դեպքում դու կկորցնես թե՛ ներդրած գումարը, թե՛ ակնկալվող եկամուտները: Բայց եթե ներդրումդ բաժանված լիներ տարբեր ընկերությունների, տարբեր գործիքների կամ նույնիսկ տարբեր արժույթների միջև, այդ կորուստը չէր լինի կործանարար:

Ահա թե ինչու է ներդրողի համար կարևոր՝ ներդրումները կատարել տարբեր ոլորտներում, տարբեր արժույթներով ու տարբեր գործիքներով: Երբ մեկը կորուստ է ունենում, մյուսը կարող է եկամուտ բերել և հավասարակշռել ընդհանուր արդյունքը: Ի դեպ, ներդրումային ընկերությունների առաջարկած ներդրումային ֆոնդերը կամ փայերը հենց այս սկզբունքով են աշխատում. քո ռիսկի ախորժակից կախված կազմվում է պորտֆել՝ ռիսկային կամ ավելի ապահով գործիքների համադրությամբ: Այսպես դու ստանում ես հավասարակշռված լուծում՝ ավելի քիչ անհանգստանալու և ավելի վստահ քայլելու համար:

Արամ. Իսկ ներդրումները երաշխավորված են, ինչպես ավանդները:

Ֆինանսական գուրու. Ո՛չ: Ներդրումների եկամուտը կախված է շուկայից: Կարող ես շահել, բայց նաև որոշ դեպքերում կորցնել: Դրա համար էլ կարևոր է միշտ կարգալ պայմանները, ուսումնասիրել շուկան և երբեմն խորհրդակցել մասնագետների հետ:

Արամ. Գուրու, ես կարդացի բաժնետոմսերի ու պարտատոմսերի մասին, բայց մարդիկ ասում են՝ լինում են «ակտիվ» ու «պասիվ» ներդրողներ: Ինչ է դա նշանակում:


Ֆինանսական գուրու.

- **Ակտիվ ներդրողը** փորձում է մշտապես հետևել շուկային, գնել ու վաճառել ակտիվները ճիշտ պահին: Սա ժամանակատար է ու ռիսկային, բայց որոշ դեպքերում կարող է ավելի բարձր եկամուտ բերել:

ԱՆՃՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ Կառավարում

Կյանքի իրավիճակ

Արամը արդեն աշխատում է: Նա յուրաքանչյուր ամսվա սկիզբ ստանում է իր ամբողջական աշխատավարձը: Նա վերջերս նկատեց, որ ամսվա կեսին արդեն գումարը չի հերիքում: Նա մտածում էր. «Ո՞ր է անհետանում իմ գումարը»: Որոշեց հարցնել



Արամ. *Գուրու, ես ամեն ամիս գումար եմ ստանում, բայց միշտ գումարս չի բավարարում: Ինչպե՞ս կարող եմ վերահսկել ծախսերս:*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
Աշխատավարձ	200,000
Թողակ/նպաստ	30,000
Պարգևավճար	50,000
Ավանդային ներդրումից տոկոսներ	10,000
Փոխանցում արտերկրից	30,000
ԸՆԴԱՄԵՆԸ	320,000

ԾԱԽՍԵՐ ԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ	
Խնայողություն	60,000
Վարկի մարում	35,000
Կոմունալ վճարներ	25,000
Հեռախոսակապ և ինտերնետ ծառայության վճարներ	10,000
Գույքահարկ	5,000
Սննդի գնում	100,000
Տրանսպորտային ծախսեր	20,000
Հագուստի գնում	25,000
Մարզասրահի անդամակցության վճար	10,000
Ժամանցային վայրեր	30,000
ԸՆԴԱՄԵՆԸ	320,000

Ֆինանսական գուրու. *Արամ ջա՛ն առաջին քայլը բյուջե կազմելն է, ամեն ինչ սկսվում է այստեղ. պետք է իմանաս, թե ինչ է կատարվում քո փողերի հետ, հետո անցնես լրուծումների: Բյուջեն քո ծախսերի և եկամուտների հասադրումն է որոշակի*

ժամանակահատվածի համար (սովորաբար ամսական): Բյուջե կազմելու ամենահեշտ և տարածված ձևերից է աղյուսը. մի մասում գրում են եկամտի բոլոր աղբյուրները, իսկ մյուսում՝ ծախսերը: Գումարելով բոլոր ծախսերն ու եկամուտները՝ կարող են ունենալ երեք իրավիճակ. կան եկամուտներն ավելի շատ լինեն, քան ծախսերը, այսինքն՝ ունենանք բյուջեի ավելցուկ կամ խնայողություններ: Կարող են ծախսերն ավելի շատ լինել, քան եկամուտները, որը անվանում ենք պակասուրդ, կամ էլ այդ երկուսը կարող են հավասար լինել, որի դեպքում ունենք հավասարակշռված բյուջե:

Արհ' դիտարկենք ամսական բյուջեի պարզեցված աղյուսակային օրինակ:

Արամ. Իսկ ինչպե՞ս կազմեմ այն, ինչ տարրերից է այն բաղկացած:

Ֆինանսական գուրու. Կան բավմաթիվ հավելվածներ, որոնք քայլերով օգնում են քեզ կազմել ու կառավարել բյուջեն: Այդպիսի հավելվածներ կարող են գտնել Google play-ում կամ App store-ում համապատասխան բանալի բառերը մուտքագրելով՝ budget, Money:

Բայց եթե որոշել են ինքդ ձեռքով կամ excel/google sheet-ով կազմել բյուջե, ուրեմն հետևի՞ր ստորև ներկայացված քայլերին:

1. Սահմանիր քո անձնական կամ ընտանեկան նպատակները. հիշիր՝ բյուջե կազմելու առաջնային պատճառներից մեկը քո նպատակների իրագործումն է. սահմանիր քո կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները:

2. Քնահատիր քո ամսական եկամուտները. բյուջեն պետք է ներառի ինչպես քո եկամտի հիմնական աղբյուրները (օրինակ՝ աշխատավարձ, ներդրումներից ստացված եկամուտներ), այնպես էլ ոչ մշտականները (որևէ իրի վաճառքից ստացված գումար, նվերներ, պարգևավճարներ և այլն): Եթե սեզոնային աշխատող ես կամ աշխատավարձը կանոնավոր չէ, կարող ես օգտագործել քո միջին ամսական եկամտի մեծությունը: Ենթադրենք՝ նախորդ 3 ամիսներին դու ստացել ես ամսական 145 000 դրամ, 135 000 դրամ և 140 000 դրամ եկամուտ: Զո միջին ամսական եկամուտը կկազմի $140\ 000$ դրամ ($(145\ 000 + 135\ 000 + 140\ 000) \div 3$): Յենց $140\ 000$ դրամով էլ կարող ես պլանավորել հաջորդ ամսվա բյուջեն: Սեզոնայինի օրինակ. եթե տարվա կտրվածքով դու վաստակում ես $1\ 800\ 000$ դրամ, միջին ամսական եկամուտը կարող ես հաշվել՝ $1\ 800\ 000$ դրամը բաժանելով 12 -ի: Արդյունքում կստանաս ամսական $150\ 000$ դրամ:

3. Որոշիր՝ որքան պետք է կազմեն քո պարբերական խնայողությունները. գումար խնայելու երկու հիմնական պատճառներն են նպատակների իրագործումը և կյանքի անսպասելի իրավիճակներին ֆինանսապես պատրաստ լինելը: Շատ մասնագետներ խորհուրդ են տալիս խնայողությունները պահել երկու առանձին գործիքներում. դրանցից մեկը

պետք է հավելյալ եկամուտ ապահովի, իսկ մյուսը պետք է ցանկացած պահի հասանելի լինի, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանաս օգտագործել:

Հիշիր, որ պետք է խնայել նախօրոք որոշված մեծությամբ, իսկ եկամտի մնացած մասն ուղղել սպառմանը և ոչ թե հակառակը՝ ծախսել ըստ ցանկության և խնայողությանը հատկացնել միայն այնքան գումար, որքան կմնա բոլոր ծախսերից հետո: Աշխատիր ամսական եկամտիդ 10-20%-ը խնայել:

4. Հաշվարկի պարտադիր ծախսերը. դրանցից են վարկերը, վարձավճարները, կոմունալները, հարկերը, որպես կարիք ծառայող մնունը, տրանսպորտը: Եթե ունես տան, ավտոմեքենայի, կյանքի կամ առողջության ապահովագրություն, ապա դա և՛ս ներառիր թո բյուջեում: Եթե բյուջե կազմելիս նկատես, որ վարկերի մարմանն ուղղված վճարները, միասին վերցրած, գերազանցում են ամսական եկամտիդ 30%-ը, ապա փորձիր հնարավորինս շուտ մարել դրանց մի մասը, այլապես ֆինանսական խնդիրներ կունենաս: Ենթադրենք՝ ամսական եկամուտդ կազմում է 300 000 դրամ: Այդ դեպքում վարկերի մարման ամսական վճարներդ չպետք է գերազանցեն 90 000 (300 000 * 30%) դրամը: Բայց եթե գերազանցում են, ուրեմն ժամանակն է հնարավորինս նվազեցնել ոչ էական ծախսերիդ մի մասը կամ գտնել եկամտի նոր աղբյուրներ՝ թեկուզ կարճաժամկետ, և վաստակած գումարն ուղղել վարկերի մարմանը: Օրինակ, եթե ունես տարածք կամ բնակարան, որը չես օգտագործում, ապա կարող ես այն վարձակալության տալ: Կամ եթե տիրապետում ես որևէ լեզվի կամ առարկայի (օրինակ՝ մաթեմատիկա, անգլերեն, հայոց լեզու ...), ապա կարող ես պարապել դպրոցականների կամ սկսնակների հետ:

5. Ավելացրու այլ կենցաղային կարիքներին և ցանկություններին բաժին ընկնող գումարը. որքան էլ կարևոր է խնայելը, բայց կյանքը վայելելը ևս բարեկեցության անբաժանելի մասն է: Գումարում ենք ժամանցի, դրսում սննդի, հարմարավետ տրանսպորտի, հագուստի, բաժանորդագրությունների, մարզասրահի և այլ ծախսեր, եթե մեր ֆինանսական վիճակը կարող է դա մեզ թույլ տալ:

Արամ. Իսկ ինչպե՞ս կառավարեն բյուջես, որ ամսվա վերջում գումար ունենան:

Ֆինանսական գուրու. Քեզ կպատմեն երկու մեթոդների մասին, դրանք կարող են օգնել քեզ:

1. 20/50/30 մեթոդ

1. Եկամուտը ստանալու անմիջապես հետո **խնայում ենք 20%-ը**, օրինակ՝ 100 000 դրամից 20 000 դրամն ուղարկում ենք խնայողական հաշիվ ու մոռանում դրա մասին, այլապես հաստատ չես խնայելու: Բայց խնայել պետք է, վստահի՞ր ինձ, ես գուրու եմ

2. Ունեցած փողի **50%-ով հոգում եք կարիքները**, օրինակ՝ 100 000 դրամից 50 000 դրամով գնում եք սնունդ, վճարում կոմունալները, վարկերը և հոգում այն ամենը, ինչը թեզ համար կարիք է:

3. Քո եկամուտների **30%-ով հոգում ես ցանկությունները**, օրինակ՝ 100 000 դրամ եկամտից 30 000 դրամով կարող ես ժամանցը հոգալ, ցանկալի հագուստ ու նվերներ գնել: Այսպիսի ծախսերը կարող են բարձրացնել քո կյանքի որակը, բայց եթե տեղին ու հիմնավորված չլինեն, կարող են նույնչափ անհանգստություն պատճառել ու զցել կյանքի որակը: Ի դեպ, այս 30%-ը պարտադիր չէ ամեն ամիս անել, օրինակ՝ կարող ես մի քանի ամիս հավաքել ու մեկնալ հանգստի: Մի քիչ ավելի ճկուն մտածիր, դե երիտասարդը հո դձև ես



2. 80/20 մեթոդ

Այս մեթոդը 50/30/20 մեթոդի առավել պարզեցված տարբերակն է, ըստ որի՝ հարկավոր է խնայել եկամուտների 20%-ը, իսկ մնացած մասը ծախսել ըստ հայեցողության:

Իհարկե, կախված քո անձնական հանգամանքներից և ֆինանսական նպատակներից՝ դու կարող ես փոփոխել խնայողության և սպառման համամասնությունները. կարող ես այն դարձնել 70/30, 60/40 կամ նույնիսկ 50/50: Գլխավոր պայմանը մեկն է՝ հատկացնել խնայողությանը առնվազն 20%:

Հաճախ հանդիպում է նաև 80/10/10 տարբերակը, որը բաժանում է եկամուտները հետևյալ կերպ.

- Կարիքներ և ցանկություններ – 80%
- Խնայողություն – 10%
- Ներդրում կամ բարեգործություն– 10%

Երրորդ կետը վերաբերում է այլոց հետ կիսվելուն ու ավելացված արժեք ստեղծելուն: Չ՞է որ գումարը միայն ծախսելու համար չէ, կարևոր է մի լավ գործ անելը, ինչ-որ մի տեղ մի քիչ ավելի երջանկություն ստեղծելը: Կարող ես համայնքին նպաստել, հավես գաղափարին գումար ուղղել և այլն:

Այսպիսով, ինչ մեթոդ էլ ընտրես քո անձնական բյուջեն կազմելու և վերահսկելու համար, հիշիր՝ կարևորը մեկն է՝ գտնել լավագույն հավասարակշռությունը քո՝ այսօրվա կենսակերպի և վաղվա բարեկեցության միջև: Երբեք պետք չէ տրվել թանկարժեք և անկարևոր իրեր ձեռք բերելու գայթակղությանը՝ մոռանալով երկարաժամկետ նպատակների և երազանքների մասին: Մի քիչ էլ վաղվա օրվա մասին մտածիր: Հումորս երևի հասկացար, եթե «Մեր բակը» դիտել ես

Արամ: *Ինչպե՞ս հավատարիմ մնամ բյուջեին և չըջանցեմ այն*

Ֆինանսական գուրու: *Բյուջեն Սահմանադրությունը չէ, այն կարող ես շրջանցել բայց եթե ուզում ես պլանավորածիցդ շատ շփոթվել, հետևիր այս պարզ, բայց կարևոր քայլերին.*

1. սահմանիր հստակ և իրատեսական նպատակներ, կազմիր պլան դրանց հասնելու,
2. եղիր մանրախնդիր և բյուջեում ներառիր բոլոր հնարավոր ծախսերը
3. դասակարգիր ծախսերն ըստ առաջնահերթության, պատրաստ եղիր որոշ ոչ առաջնահերթ ծախսեր չանել՝ հանուն կարևոր նպատակների,
4. պարբերաբար վերանայիր քո կատարած ծախսերը և հրաժարվիր վատ ծախսային սովորություններից
5. եղիր ճկուն և ժամանակ առ ժամանակ վերանայիր բյուջեիդ կառուցվածքը,
6. եթե քեզ վրա սահմաններ դնելն աշխատում է, կարող ես օգտագործել ծրարների մեթոդը. օրական այսքան գումարից ավել չեմ ծախսում կամ ցանկությունների համար հատկացված գումարս սպառվել է, այսօր կարող եմ ընկերոջս հետ այգում քայլել,
7. ներգրավիր քո ընկերներին և մտերիներին, որ ոգևորեն քեզ, բայց մի կիսիր ֆինանսական գաղտնիքներ,
8. պարբերաբար վերհիշիր այն նպատակները, որոնց համար խնայում ես:

Շատ կարևոր է ամսվա վերջում նայել՝ ինչ էիր պլանավորել ու ինչ ստացվեց: Այստեղ սկսվում է կինոն՝ գուցե ծիւղը վերջապես «թարգելու» ժամանակն է, գուցե մեքենա գնելն ավելի խելամիտ էր, քան ամսական 50 000 դրամ տաքսիներին տանը ...

Վերջաբան

Արամը սովորեց, որ բյուջեն պարզապես թվերի ցանկ չէ, այլ անձնական ֆինանսական քարտեզ: Նա հասկացավ՝ եկամուտներն ու ծախսերը գրի առնելը, դրանք ճիշտ բաշխելը և հստակ նպատակներ սահմանելը օգնում են կառավարել ոչ միայն գումարը, այլև սեփական ապագան:

Գուրուի գլխավոր դասը պարզ էր. եթե դու չես վերահսկում թո գումարը, այն կսկսի վերահսկել քեզ: Իսկ ճիշտ կազմված բյուջեն դարձնում է փողը հուսալի գործընկեր, այլ ոչ թե մշտական խնդիր:

Գործնական աշխատանք

Կարդա՛ հարցերը, պատասխանիր և մեկնաբանիր

Առաջադրանք 1. Բյուջեի կազմում

Ուսումնասիրիր ժամանակակից բյուջատային հավելվածները և մեկ ամիս փորձարկիր դրանցից մեկը: Այնքան հետաքիթ է բյուջե պլանավորելն ու ամսվա վերջում իրական բյուջեի հետ համեմատելը: Կարող ես դա անել նաև Excel/google sheet կամ այլ գործիքներով:

Առաջադրանք 2. Հավելյալ գումարի ստացում

Դու ստացել ես անսպասելի 200,000 դրամ պարգևավճար: Քեզ առաջարկվում են երեք տարբերակ՝

- ա. ծախսել ճանապարհորդության համար
- բ. հնայել գումարը ապագա նպատակի համար
- գ. վճարել առկա վարկի մի մասը

Պատասխանիր հետևյալ հարցերին.

1. Ո՞ր տարբերակը կընտրես և ինչու՞:
2. Ի՞նչ երկարաժամկետ հետևանքներ կարող են լինել յուրաքանչյուր տարբերակի դեպքում:
3. Ո՞ր պայմանների փոփոխության դեպքում ընտրությունը կփոխես:

Ռիսկերի կառավարում

Կյանքի իրավիճակ


Արամը արդեն սովորել է կառավարել իր բյուջեն և ճիշտ օգտագործել վճարային քարտերը: Բայց նա երբեմն բախվում է իրավիճակների, որոնցում հասկանում է, որ ամեն բան կախված է իր որոշումներից: Նա չի կարող ամեն բան կանխատեսել. գնաճ, արժույթի տատանումներ կամ անսպասելի դեպքեր: Արամը սկսում է ծանոթանալ ռիսկերի աշխարհին և հասկանալ, թե ինչպես կարելի է պաշտպանել դրանցից:



Արամ. Գուրո՛ւ, ինձ կասես՝ ի՞նչ ռիսկերի առաջ կարող եմ կանգնել ֆինանսական շուկաներում:

Ֆինանսական գուրու. Ֆինանսական աշխարհում կան մի շարք ռիսկեր: Թվարկեմ ամենատարածվածները.

- Գնաճի ռիսկը երբ գներն աճում են, իսկ քո գումարի գնողունակությունը նվազում է:
- Արտարժույթի փոխարժեքի ռիսկը, երբ ֆինանսական որևէ գործարք ես անում այլ արժույթով, փոխարժեքի տատանումները կարող են վնասել քո ֆինանսները:
- Կյանքի անակնկալ ռիսկերը, երբ պատահում են անկանխատեսելի դեպքեր (հիվանդություն, վթար, վնաս), որոնք ֆինանսական կորուստներ են առաջացնում:



Արամ. Իսկ ի՞նչ կարող եմ անել, որ այդ ռիսկերն իմ ֆինանսների վրա քիչ ազդեն:

Ֆինանսական գուրու. Ռիսկերի հետ կարող ենք անել 4 բան.

1. **Խուսափել ռիսկից.** օրինակ երբ ամուսինները պատրաստվում են երեխա ունենալ, նրանք կարող են այդ ժամանակահատվածում բացառել բոլոր մեծ ծախսերը, որպեսզի ինչպես գումար երեխայի հետ կապված ծախսերի համար: Նույնպես դու կարող ես խուսափել ֆինանսական տատանումներից և այդպես էլ չվերցնել ավտովարկը, եթե կասկածում ես՝ կարող ես ծախսերը հոգալ, թե ոչ:

Շատերն էլ ավանդ չեն դնում կամ վարկ չեն վերցնում արտարժույթով (դուլար, եվրո, ռուբլի և այլն), քանի որ խուսափում են տարադրամի փոխարժեքի տատանման ռիսկերից:

2. **Նվազեցնել ռիսկը.** եթե չես կարող խուսափել հնարավոր ռիսկից, կարող ես գոնե անվտանգության բարձիկ/խնայողություններ ունենալ, որը կօգնի անհրաժեշտության դեպքում:

Փոխարժեքի պարագայում էլ դու կարող ես նվազեցնել տարադրամի փոխարժեքի տատանման ռիսկը, եթե հաշվարկեր անես: Օրինակ, եթե ունես ֆինանսական նպատակ, որը դուլարով է, օրինակ՝ սովորել ԱՄՆ-ում, ապա կարող է խելամիտ լինել գումարը խնայել ու ներդնել հենց դուլարով: Բայց եթե դու հաշվարկես, որ դրամով ավանդ դնելը. պարտատոմս գնելը կամ այլ ներդրում կատարելն ավելի եկամտաբեր է, քան դուլարովը, կարող ես դրամով կատարել: Վարկերի դեպքում փոխարժեքի ռիսկը նվազեցնելու համար էլ առաջարկում եմ վերցնել քո եկամտի արժույթով, օրինակ՝ եթե դրամով ես եկամուտ ստանում, վարկդ եթե դրամով լինի, չես տուժի տարադրամի փոխարժեքի տատանումից: Սա կարծես միաժամանակ ռիսկից խուսափել լինի:

Փոխարժեքի մասին մանրամասն կարող ես դիտել մեր հոլովակներում:



3. **Փոխանցել ռիսկը.** եթե ինքդ չես կարող «ռիսկի տակից դուրս գալ», կարող ես ձեռք բերել ապահովագրություն ու ռիսկը փոխանցել ապահովագրական ընկերությանը: Օրինակ՝ առողջության ապահովագրություն, գույքի, պատասխանատվության և այլ ապահովագրություն: Նույն կերպ չես կարող պայթարել գնաճի դեմ: Դե ինձ թվում է, որ չես կարող դրա փոխարեն կարող ես իմանալ, որ կայուն գների ապահովումը Կենտրոնական բանկի գործառույթներից է, դու կարծես փոխանցել ես բարձր գնաճի ռիսկը Կենտրոնական բանկին: Բայց իհարկե դու էլ անելիք ունես. դու կարող ես քո խնայողությունները ներդնել, որպեսզի դրանք էլ գումար աշխատեն: Արդյունքում քո գնողունակությունը չի նվազի, հետագայում էլ կկարողանաս գնել անհրաժեշտ ապրանքներն ու ծառայությունները: Բայց եթե գումարը տանը պահես, գները կբարձրանան, իսկ քո գումարը կմնա նույնը:

Արդյունքում չես կարողանա գնել այն համակարգիչը, որի համար գումար էիր խնայել, քանի որ այն այժմ ավելի թանկ է:

4. **Ընդունել ռիսկը.** դե եթե ոչինչ չես կարող անել, պարզապես «հաշտվում ես» ռիսկի հետ: Օրինակ ընդունում ես, որ կարող էիր ավելի շատ վաստակել, բայց այս ապրելակերպը քո ընտրությունն է:



Արամ. Մի քիչ ավելի մանրամասն կպատմե՞ս ապահովագրության մասին:

Ֆինանսական գուրու. *Իհարկե. ապահովագրված անձինք ապահովագրական ընկերությանը վճարում են գումարներ (ապահովագրավճար), ինչի արդյունքում ընկերությունում կուտակվում է մեծ գումար: Երբ ապահովագրված անձանցից կամ իրից որևէ մեկի հետ պատահար է տեղի ունենում, ապահովագրական ընկերությունը կուտակված միջոցներից հատուցում է առաջացած ծախսերը: Ապահովագրվելով՝ մարդիկ ձեռք են բերում վստահություն ու հանգստություն ապագայի հանդեպ: Ապահովագրությունը խոշոր անկանխատեսելի վնասները վերածում է փոքր կանխատեսելի ծախսերի: Ներկայացնեմ ապահովագրական մի քանի եպրեր/տերմիններ, որոնք կարող են քեզ պետք գալ.*

Ապահովադիր՝ ապահովագրական ընկերության հետ ապահովագրական պայմանագիր կնքող անձը:

Ապահովագրված անձ՝ այն անձը, որի համար կնքվում է ապահովագրական պայմանագիրը և որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումն է ապահովագրության պայմանագրի առարկան:

Ապահովագրավճար՝ ապահովագրական պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովադրի կողմից ապահովագրողին վճարվելիք գումարը:

Ապահովագրական օբյեկտ՝ ապահովագրման ենթակա գույքային և անձնական շահերը:

Ապահովագրող՝ ապահովագրական ընկերություն, որը կազմակերպում է ապահովագրության գործընթացը: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ Ապահովագրական ընկերությունը ապահովագրական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձն է:

Ապահովագրական գումար՝ առավելագույն գումարը, որը կարող ես ստանալ որպես հատուցում:

Ապահովագրական պատահար՝ այն դեպքը կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին տրամադրել ապահովագրական հատուցում:

Ապահովագրական ռիսկ՝ ապահովագրական պատահարի վրա հասնելու կամ դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունը:

Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովադրին կամ շահառուին վճարման ենթակա գումարը:

***Արամ.** Իսկ ինչպե՞ս է որոշվում՝ ապահովագրական ընկերությունը կհատուցի գումարը, թե ոչ, և որքան կլինի հատուցման չափը:*

***Ֆինանսական գուրու.** Ամեն ինչ կախված է քո պայմանագրից: Նախ պետք է ուշադիր լինես ապահովագրություն ձեռք բերելիս, որպեսզի տեղյակ լինես՝ որ դեպքերում են հատուցում, ինչպես է պետք դիմել, որ հատուցեն: Օրինակ՝ եթե պատահարից հետո երկար ժամանակ անցնի, նոր դիմես, կարող են և չհատուցել գումարը: Ապահովագրության պայմանագրում ուշադրություն դարձրում նաև ապահովագրական հատուցման մեծության որոշման մեթոդին:*

***Արամ.** Իսկ պատահարից հետո ապահովագրական գումարը կփոխվի:*

***Ֆինանսական գուրու.** Կախված է ապահովագրության գումարի որոշման մոտեցումից.*

- նվազող. եթե ապահովագրական գումարը սահմանված է բոլոր պատահարների համար, պատահարից հետո գումարը նվազեցվում է հատուցման չափով: Հերթական պատահարների հատուցումն արդեն կատարվում է նվազեցված ապահովագրական գումարի սահմաններում:
- վերականգնվող. եթե ապահովագրական գումարը սահմանված է յուրաքանչյուր պատահարի համար առանձին, ապա դա վերականգնվում է յուրաքանչյուր պատահարի դեպքում: Ուստի, հնարավոր է՝ սահմանվի ավելի բարձր ապահովագրավճար:

Դիտարկենք մի օրինակ. քո ավտոմեքենայի ապահովագրական գումարը 100 000 դրամ է: Ենթադրենք՝ հուլիսին քո ավտոմեքենան թեթևակի վնասվել է:

Ապահովագրական ընկերությունը քեզ հատուցել է 10 000 դրամ:

Սեպտեմբերին քո ավտոմեքենան կրկին վթարի է ենթարկվել և ամբողջովին վնասվել: Եթե ապահովագրական ընկերությունը կիրառում է

ապահովագրական գումարի հաշվարկի նվազող մոտեցումը, ապա թեզ կփոխհատուցի ոչ թե 100 000, այլ 90 000 դրամ (100 000 – 10 000), քանի որ նախկինում հատուցել էր 10 000 դրամ: Այսպես՝ պայմանագիրը կավարտվի ժամկետից շուտ, քանի որ ապահովագրական գումարը կհավասարվի 0-ի: Եթե ապահովագրական ընկերությունը կիրառում է ապահովագրական գումարի հաշվարկի վերականգնվող մոտեցումը, ապա փոխհատուցում կստանաք ամբողջությամբ՝ 100 000 դրամի չափով: Ապահովագրական պայմանագիրը կավարտվի նախատեսված ժամկետում:

Արամ. *Լավ, իսկ ինչ է միջին արժեքի պայմանը:*

Ֆինանսական գուրու. *Ըստ միջին արժեքի պայմանի՝ եթե ապահովագրված օբյեկտն ունի ավելի մեծ արժեք, քան ապահովագրական գումարը, պատահարի դեպքում ապահովագրիչը կստանա հատուցում նույն համամասնությամբ, ինչպիսին ապահովագրական գումարի հարաբերությունն է ապահովագրված օբյեկտի արժեքին:*

Օրինակ՝ թո ա վտոմեքենայի արժեքը 2 մլն դրամ է, սակայն դու ապահովագրել ես 1 մլն դրամ ապահովագրական գումարի չափով: Ենթադրենք՝ վթարից վնասի մեծությունը 200 000 դրամ է: Համաձայն միջին արժեքի պայմանի՝ ապահովագրական հատուցումը կկազմի վնասի մեծության 50%-ը 100 000 դրամ, քանի որ ապահովագրական գումարը 2 անգամ պակաս է թո ավտոմեքենայի արժեքից:

Նվազող մեթոդի կիրառման դեպքում միջին արժեքի պայմանով հատուցումը նվազում է ավելի մեծ չափով: Օրինակ՝

	ՊԱՏԱՀԱՐ 1	ՊԱՏԱՀԱՐ 2	ՊԱՏԱՀԱՐ 3
Ապահովագրական օբյեկտի արժեք	10 000 դրամ	10 000 դրամ	10 000 դրամ
Ապահովագրական գումար	5000 դրամ	4500 դրամ	4050 դրամ
Ապահովագրական գումար / օբյեկտ	50 %	45 %	40,5 %
Վնասի մեծություն	1000 դրամ	1000 դրամ	1000 դրամ
Հատուցման մեծություն	500 դրամ	450 դրամ	405 դրամ

Արամ. Որո՞նք են ապահովագրության տեսակները:

Ֆինանսական գուրու. Արամ ջան, ապահովագրության տարբեր տեսակներ կան, օրինակ՝

- կամավոր ապահովագրությունը քո ցանկությամբ ապահովագրական ընկերության հետ ապահովագրության պայմանագրի կնքումն է:
- պարտադիր ապահովագրությունը քո կամքից անկախ, օրենքով սահմանված պահանջ է ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու վերաբերյալ: Այս պահին Հայաստանում պարտադիր է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ):

Ապահովագրել կարելի է ինչպես գույքային (մեքենա, տուն և այլն), այնպես էլ ոչ գույքային (առողջություն, կյանք և այլն) շահը:

Գույքային շահը կարող է ապահովագրվել տարբեր ռիսկերից՝ հրդեհից, պայթյունից, գողությունից, փոթորկից, սողանքից կամ այլ ապահովագրական պատահարներից:

Ոչ գույքային շահերը կարող են ապահովագրվել տարբեր պատահարներից.

- Պատասխանատվության ապահովագրություն. երրորդ անձին անզգույշ կամ ոչ միտումնավոր կերպով պատճառված վնասների ապահովագրություն:
- Առողջության ապահովագրություն. հատուցման ենթակա են առողջության վերականգման և բուժման ծախսերը:
- Դժբախտ դեպքերից ապահովագրություն. դժբախտ պատահարի հետևանքով մահվան կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում ֆինանսական ծախսերի հատուցում:

Արամ. Ինչպե՞ս ապահովագրվեմ:

Ֆինանսական գուրու. Դու կարող ես ձեռք բերել ապահովագրական վկայագիր երկու տարբերակով.

- Ուղղակի՝ հենց ապահովագրական ընկերություն այցելելով:
- Անուղղակի՝ ապահովագրական բրոքերների կամ գործակալների միջոցով:

Ապահովագրական գործակալները և բրոքերները համարվում են ապահովագրական միջնորդներ, այսինքն՝ նրանք օժանդակում են ապահովագրողների և ապահովադիրների միջև հարաբերությունների հաստատմանը.

Ապահովագրական գործակալը ներկայացնում է ապահովագրական ընկերությունը, այլ կերպ ասած՝ նրա անունից եւ հանձնարարությամբ է հանդես գալիս: Շատ պարզ ասած՝ օգնում են ապահովագրական ընկերությանը՝ գտնել հաճախորդներ: Օրինակ բանկը կարող է լինել ապահովագրական գործակալ՝ առաջարկելով բեզ համապատասխան ապահովագրություն:

Ապահովագրական բրոքերը կայացնում է ապահովադիրին, այլ կերպ ասած՝ ապահովադրի անունից և հանձնարարությամբ հանդես է գալիս նրա կողմից տրված լիազորությունների շրջանակում: Շատ պարզ ասած՝ բեզ են օգնում, որ գտնես բեզ համար հարմար ապահովագրություն, տրամադրում են խորհրդատվություն, կազմակերպում պայմանագրի կնքումը և այլն:

Յուրաքանչյուր գործակալ կամ բրոքեր ունի լիազորությունների շրջանակ և պետք է ունենա համապատասխան լիցենզիա (բրոքերների դեպքում) կամ գրանցված լինեն Կենտրոնական բանկում (գործակալների դեպքում): Խաբեություններից խուսափելու համար պահանջեք միջնորդից նրա գրանցման վկայականը կամ այցելեք Կենտրոնական բանկի կայք՝ ճշտելու համար, թե արդյոք տվյալ անձը ունի միջնորդության վկայական:

Վերջաբան

Այսպիսով, Արամը հասկացավ, որ նույնիսկ եթե ճիշտ բյուջե է կազմում ու խնայողություններ ունի, նա չի կարող ամբողջությամբ ազատվել ռիսկերից: Գնաճը կարող է նվազեցնել իր գումարի արժեքը, փոխարժեքի տատանումները կարող են տատանել իր ներդրումների չափը, իսկ անակնկալ պատահարները՝ ստեղծել լրացուցիչ ծախսեր: Սակայն ճիշտ քայլերով հնարավոր է այդ ռիսկերը կառավարել ու ավելի վստահ զգալ ֆինանսական աշխարհում:

Գործնական աշխատանք

Իրավիճակային առաջադրանք 1

Ստորև ներկայացրել ենք ֆինանսական տարբեր ռիսկեր: Ամեն իրավիճակի համար ընտրիր ռիսկի կառավարման քո ուղին. ինչ կանես այդ իրավիճակում կնվազեցնեն ռիսկը, կխուսափեն, կփոխանցեն, թե՛ կընդունես: Եվ նշիր, թե ինչպես:

<p>Դու այս շաբաթ ունես ֆինանսական մեծ ու կարևոր ծախս, ինչպե՛լ ես դրա համար գումար, բայց միաժամանակ սիրելի ընկերոջից չնախատեսված հրավեր ես ստանում ռեստորանում ծնունդի տոնի</p>	
<p>Դու ունես տարբեր ներդրումներ՝ դրամով պարտատոմսեր, դոլարով արժեթղթեր, եվրոյով կրիպտոակտիվներ: Մի օր արթնանում ես ու տեսնում, որ դրամն արժևորվել է դոլարի ու եվրոյի նկատմամբ, այսինքն քո դոլարային ու եվրոյով ներդրումների արժեքը նվազում է</p>	
<p>Դու ունես խնայողություններ քո ընթացիկ հաշվում, որը տարեկան ընդամենը 2 % եկամտաբերություն է ապահովում: Բայց տարեվերջին իմանում ես, որ երկրում 3.5% գնաճ է եղել:</p>	

Իրավիճակային առաջադրանք 2

Կարո՞ւմ իրավիճակները և պատասխանի՞ր տրված հարցերին.

Իրավիճակ 1. Կարենը մեքենայով վթարի է ենթարկվել, Նա դուրս էր եկել հանդիպակաց երթուղի և ուժեղ հարվածել էր դիմացից եկող մեքենային: Արդյունքում երկու մեքենաներն էլ վնասվել են: Կարենը ունի միայն ԱՊՊԱ ապահովագրություն:

1. Ո՞ւմ վնասներն է ԱՊՊԱ-ն փոխհատուցելու:

- ա) Միայն Կարենի մեքենայի
- բ) Միայն ուրիշ վարորդի մեքենայի և առողջական վնասի
- գ) Երկու մեքենաների

2. Ո՞վ է կրելու Կարենի սեփական մեքենայի վնասի ծախսերը:

- ա) ԱՊՊԱ-ն
- բ) Կամավոր ապահովագրությունը
- գ) Ինքը՝ Կարենը

Իրավիճակ 2. Նունեն մեքենան կայանել է բակում, և գիշերը այն վնասվել է ուժեղ քամու պատճառով ընկած ծառից: Նա ունի ինչպես ԱՊՊԱ, այնպես էլ կամավոր ավտոապահովագրություն (CASCO):

1. Այս դեպքում արդյո՞ք ԱՊՊԱ-ն կտամ փոխհատուցում:

- ա) Այո
- բ) Ոչ

2. Ո՞ր ապահովագրությունն է փոխհատուցելու Նունեի մեքենայի վնասը:

- ա) ԱՊՊԱ
- բ) Կամավոր ավտոապահովագրություն (CASCO)
- գ) Ոչ մեկը

Իրավունքների պաշտպանություն ֆինանսների ոլորտում



Կյանքի իրավիճակ

Արամը նոր մեքենա էր գնել և կնքել ԱՊՊԱ պայմանագիր: Մի օր նա վթարի մեջ ընկավ: Երբ դիմեց ապահովագրական ընկերությանը, հատուցման չափը ստացվեց ավելի քիչ, քան հաշվարկել էր: Արամը զարմացավ. տեսնես խախտվել են իր իրավունքները: Որպեսզի հասկանա՝ ճիշտն ինքն է, թե ոչ, որոշեց խորհրդակցել ֆինանսական գուրուի հետ:

Արամ. *Գուրու, արի սկսենք ամենասկզբից. ինչ իրավունքներ ունեմ ես ֆինանսների աշխարհում:*

Ֆինանսական գուրու. *Քո հիմնական իրավունքներն են.*

- Դու միշտ իրավունք ունես ամբողջական ու հստակ տեղեկատվություն ստանալու ցանկացած ֆինանսական ծառայության մասին: Դա կարող է լինել բրոշյուրի, պաշտոնական կայքի, աշխատակցի պարզաբանման կամ այլ տեսքով:
- Պայմանագրում նշված են քո բոլոր իրավունքները. այն պետք է պահես և կարդաս մանրամասն: Վարկային, ավանդային պայմանագրերին պետք է կցվի նաև «Ի՛նչ անել, եթե բողոք ունեք» թերթիկը, որտեղ նկարագրվում է, թե ում և երբ կարող ես դիմել խնդրի դեպքում, որքան ժամանակում պետք է քեզ պատասխանեն: Այս թերթիկը կտան քեզ նաև, երբ բողոք կամ դիմում ունենաս ֆինանսական կազմակերպությանը:
Դու կարող ես ընտրել, թե ինչպես ստանաս կարևոր տեղեկությունները՝ էլ փոստով, SMS-ով, կամ թղթային տարբերակով: Եթե ոչինչ չես ընտրել, դրանք ուղարկվում են էլեկտրոնային եղանակով:
Բանկը կամ ապահովագրական ընկերությունը պարտավոր է տեղեկացնել կարևոր փոփոխությունների մասին:
Եվ ամենակարևորը. դու իրավունք ունես բողոքելու կազմակերպությանը:

Արամ. *Եթե չեմ գոհանում ծառայությունից, բողոք ունեմ, իմ դիմեմ:*

Ֆինանսական գուրու. *Քո քայլերը պետք է լինեն.*

1. Նախ դիմիր ֆինանսական կազմակերպությանը. բանկի դեմ բողոք ունես, նախ դիմիր բանկին, ապահովագրական ընկերության հետ է խնդիրը, գրավոր դիմիր նրանց: Նրանք պարտավոր են ընդունել քո բողոքը, գրանցել և պատասխանել: Սովորաբար 1 օրվա ընթացքում տալիս են ստացման հաստատում, իսկ 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր են պատասխանել՝ մերժելով, մասնակի կամ ամբողջությամբ բավարարելով:
2. Եթե համաձայն չես պատասխանի հետ, դիմիր Ֆինանսական համակարգի հաշտարարին: Նրա ծառայությունները անվճար են: Կարող ես դիմել, եթե պահանջը չի գերազանցում 10 մլն դրամը, այն չի քննվում դատարանում կամ արբիտրաժում, և կազմակերպության պատասխանից չի անցել ավելի քան 6 ամիս: Ի դեպ, կարող ես կազմակերպությանը ևս հաշտարարի գրասենյակի միջոցով դիմել, այսպես կստացվի, որ դիմում ես միայն հաշտարարին, մնացածն իրենք են կազմակերպում:
3. Այլ կառույցներ. եթե խնդիրը չի լուծվել, և ցանկանում ես շարունակել, կարող ես դիմել դատարան կամ արբիտրաժային դատարան, բայց նրանց դիմելուց հետո չես կարող դիմել ֆին. համակարգի հաշտարարին:
4. Կենտրոնական բանկ. դու միշտ կարող ես դիմել ՀՀ կենտրոնական բանկ և քո ազդակը փոխանցել: Սակայն Կենտրոնական բանկը վեճեր լուծող մարմին չէ և ստեղծել է քո դիմումները քննող հատուկ կառույց՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ:

Արամ. Իսկ ի՞նչ է Ֆինանսական համակարգի հաշտարարը:

Ֆինանսական գուրու. Նա անկախ կառույց է, որի նպատակն է **արագ, մատչելի և անվճար** լուծել սպառողների ու ֆինանսական կազմակերպությունների միջև առաջացած վեճերը:

- Դու դիմում ես, նա քո դիմումն ուղարկում է կազմակերպությանը 1-7 աշխատանքային օրերի ընթացքում:
- Կազմակերպությունը քո դիմումին պետք է պատասխանի առավելագույնը 10 աշխատանքային օրերի ընթացքում: Իսկ եթե Հաշտարարի միջոցով է դիմումն ուղարկվել, պարտավոր է 14 օրվա ընթացքում պատասխանել: Այս ժամկետը կարող է երկարաձգվել ևս 7 օրով:
- Նախորդ քայլերից հետո հաշտարարը քննում է գործը և որոշում կայացնում մինչև 24 աշխատանքային օրում, իսկ բարդ դեպքերում՝ մինչև 38 օրում:

Արամ. Գուրու, վերադառնանք իմ ապահովագրական խնդրին. ի՞նչ եմ արել, որ իմ իրավունքները պաշտպանեն:

Ֆինանսական գուրու. Կոնկրետ այս իրավիճակի համար քո քայլերն են՝

Եթե դու ստացել ես ապահովագրական ընկերության պատասխանը, բայց ցանկանում ես դիմել կրկնակի փորձաքննության, դա հնարավոր է նշանակել որոշման ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմելով ծանուցումն ուղարկած ապահովագրական ընկերությանը: Սակայն այս դեպքում փորձաքննությունը պատվիրակում է արդեն Ավտոապահովագրողների Բյուրոն՝ վճարովի հիմունքներով:

Այսինքն, բողոքարկման ցանկության դեպքում դու լրացնում ես կրկնակի փորձաքննության նշանակման դիմումը, կատարում դրա համար վճարումը, և դիմումի ու վճարման անդորրագրի հետ միասին ուղարկում ապահովագրական ընկերությանը: Ապահովագրական ընկերությունը փաթեթը ստանալուց հետո այն փոխանցում է Բյուրոյին՝ բողոքարկմանը ընթացք տալու համար:

Եթե այս մարմիններում էլ չլուծվեց, միշտ ունես դատարան դիմելու հնարավորությունը:

Արամ. Իսկ արբիտրաժն ինչի համար է:

Ֆինանսական գուրու. Արբիտրաժը վեճերի լուծման այլընտրանքային մեթոդ է: Եթե պայմանագրում համաձայնվել էս, որ վեճերը լուծվեն արբիտրաժում, ապա չես կարող դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Արբիտրներին ընտրում են կողմերը՝ բանկերի միության հաստատած ցանկից: Նրանց որոշումը պարտադիր է կողմերի համար, բայց կարող է վիճարկվել դատարանում՝ սահմանված հիմքերով: Արբիտրաժային ծառայության համար կարող են գանձվել միջնորդավճարներ: Ի դեպ, դու կարող ես հրաժարվել արբիտրաժային կարգով խնդրի լուծումից և պահանջել, որ պայմանագրում նշվի Ֆինանսական համակարգի հաշտարարով խնդրի լուծման մասին:

Վերջաբան

Արամը հասկացավ, որ իր իրավունքը պաշտպանելու համար իր կողքին կան վեճեր լուծող բազմաթիվ կառույցներ: Սկսած կազմակերպությունից մինչև հաշտարար, արբիտրաժ և դատարան. կան բազմաթիվ հնարավորություններ, որոնցով կարող է պաշտպանվել: Իսկ Գուրուն նրան հիշեցրեց, ամենակարևորը տեղեկացված լինելն է, որպեսզի կարողանաս օգտվել քո իրավունքներից ճիշտ պահին:

Գործնական աշխատանք

Առաջադրանք 1.

Անժեյան բողոք ունի իր էլեկտրոնային դրամապանակը սպասարկող ընկերության դեմ, քանի որ միջնորդավճարները ճիշտ չեն հաշվարկել: Նա որոշում է բողոքել: Ստորև բերել ենք հնարավոր քայլերը, իսկ դու ընտրիր ճիշտ հերթականությունը՝ թվարկելով 1-ից 4: Որոշ գործողություններ կարող է անել զուգահեռ, գրիր նույն թիվը, իսկ եթե ամեն փուլում էլ կարող է դիմել, դիր «*»:

Դիմել դատարան	
Դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	
Դիմել էլեկտրոնային դրամապանակը	
Սպասարկող ընկերությանը	
Դիմել արբիտրաժային դատարան	
Դիմել Կենտրոնական բանկ	

Վարկեր

Կյանքի իրավիճակ

Արամը վերջերս որոշեց վերանորոգել ծնողների տունը, սակայն նրա ինսայդդոլությունները բավարար չեն նորոգման ծախսերը ծածկելու համար, ուստի նա մտածում է վարկ վերցնելու մասին: Սակայն երբ բանկում իրեն առաջարկում են տարբեր տեսակի վարկեր՝ սպառողական, հիպոտեկային, գրավով և առանց գրավի, Արամը շփոթվում է: Որպեսզի ճիշտ որոշում կայացնի, նա դիմում է Ֆինանսական գուրուին:



Արամ: *Գուրու, ինչ է վարկը: Մի տեսակ բոլորը վախենում են դրանից:*

Ֆինանսական գուրու: *Վարկը համաձայնություն է քո և ֆինանսական կազմակերպության միջև: Վարկ կարող ես ստանալ բանկից, վարկային կազմակերպությունից կամ գրավատնից: Նրանք քեզ տալիս են գումար, իսկ դու պարտավորվում ես այն վերադարձնել՝ հավելյալ տոկոսով ու որոշ միջնորդավճարներով: Վարկը վատ բան չէ և ոչ էլ միշտ վտանգավոր, եթե այն խելամիտ ես օգտագործում: Վարկի լավ կամ վատ դառնալը կախված է նրանից, թե ֆինանսական ինչ վիճակում ես և ինչ նպատակով ես այն վերցնում: Եթե այն վերցնես նոր հեռախոսի համար, երբ եկամուտների բավարար չես, հին հեռախոսն էլ կարծես լավ էր աշխատում, անհիմն պարտք կառաջանա: Իսկ եթե վարկը օգնի վերանորոգել տունը և բարելավել ապրելակերպդ՝ այն կդառնա ներդրում:*

Վարկի առավելություններից են՝

- իրականացնում ես նպատակներդ, անգամ երբ դեռ չես ինսայել դրանց համար,
- նեղություն չես տալիս բարեկամներիդ, ընկերներիդ, երբ ունես գումարի կարիք,
- վերադարձվող գումարը բաշխում ես ըստ ամիսների,
- ստեղծում ես լավ վարկային պատմություն, պարտաճանաչ վճարելով էլ բարձրացնում ես վարկային սթորը, որն օգնում է հետագայում ևս վարկեր ստանալ:

Վարկերի թերություններն են՝

- վերադարձնում ես միշտ ավել շատ գումար, քան վերցրել ես,
- վարկերի չարաշահումը բերում է գերպարտքի ու ֆինանսական սթրեսի,
- եթե պարտաճանաչ չես մարում, ձևավորում ես վատ վարկային պատմություն, իսկ եթե գրավ ես դրել կամ ունես երաշխավոր, կորցնում ես գրավը կամ վնասում երաշխավորին:

Արամ. *Իսկ ի՞ր վարկն ընտրեմ վերանորոգման դեպքում:*

Ֆինանսական գուրու. *Միասին ուսումնասիրենք վարկերի տեսակները.*

- **Սպառողական վարկ`** անձնական կամ ընտանեկան կարիքների համար: Դրանց ներառում են ավտովարկերը, ուսանողական վարկերը, վարկային գծերը, օվերդրաֆտները, նաև ապառիկները:
- **Հիպոտեկային վարկ`** տուն գնելու, կառուցելու կամ վերանորոգելու համար: Զո դեպքում սա է ամենահարմար տարբերակը, քանի որ ավելի ցածր տոկոսներ ու ավելի երկար ժամանակով է սովորաբար լինում:
- **Գյուղատնտեսական վարկ`** գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: Մինչև 5 մլն դրամ գյուղատնտեսական վարկը համարվում է սպառողական վարկ:
- **Բիզնես վարկ`** ձեռնարկատիրական գործունեության համար:

Արամ. *Ի՞նչ պետք է իմանամ հիպոտեկային վարկերի մասին:*

Ֆինանսական գուրու. *Հիմնական առանձնահատկությունները.*

- Պահանջվում է կանխավճար, սովորաբար գումարի առնվազն 10 %-ի չափով:
- Ժամկետը միջինում 10-20 տարի է:
- Կան տոկոսադրույքների տեսակներ` հաստատուն, լողացող և ճշգրտվող: Երբ վարկի ամբողջ ժամկետում տոկոսը չի փոխվում, դա հաստատուն տոկոսն է: Երբ կարող է փոփոխվել` ըստ որևէ ցուցանիշի, դա արդեն լողացողն է, օրինակ` եթե վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրանա, քո հիպոտեկի տոկոսն էլ կբարձրանա: Իսկ եթե տոկոսը հաստատուն է, բայց սահմանափակ քանակով կարող է փոփոխվել, արդեն գործ ունենք ճշգրտվող տոկոսի հետ:
- Հաճախ հիպոտեկի հետ պահանջում են նաև տան ապահովագրություն: Առաջարկում են քեզ անել այն և չմտածել, թե դա միայն ծախս է. չէ՞ որ ռիսկերի դեպքում քեզ օգնելու է խուսափել չնախատեսված ծախսերից:

Արամ. *Իսկ ինչպե՞ս ընտրեմ վարկ:*

Ֆինանսական գուրու. *Պետք է ուշադրություն դարձնես`*

- **Նպատակին.** Կան նպատակային վարկեր, օրինակ` գյուղատնտեսական տեխնիկա գնելու համար լիզինգն է հարմար, շտապ գումարի կարիք ունենալու դեպքում սպառողական վարկը և այլն:

- **Գումարի չափին.** Վարկի ամսական մարումը թո ամսական եկամտի 30%-ը չպետք է գերազանցի: Օրինակ՝ եթե աշխատավարձը 200 000 դրամ է, չպետք է ամսական 60 000 դրամից ավել վարկ մուծես, այլապես կյանքիդ որակը կընկնի, գերապարտք կձևավորես:
- **Ժամկետին.** Որքան երկար ժամկետով վերցնես վարկը, այնքան ավելի շատ ես տոկոսներ ու միջնորդավճարներ մուծելու, բայց փոխարենը կարող ես ամսական մարումներն ավելի փոքր լինել:
- **Արժույթին.** ընտրիր այն արժույթը, որով ստանում ես եկամուտդ, որպեսզի տարադրամի փոխարժեքի տատանումները մեծ ազդեցություն չունենան թո ֆինանսների վրա: Ի դեպ Հայաստանում սպառողական և հիպոտեկային վարկերը տրվում են միայն դրամով:
- **Տոկոսի չափին և հաշվարկման ձևին.** վարկի գինը տոկոսն է և վարկի հետ կապված վճարները, օրինակ՝ միջնորդավճարները: Հագուստ ընտրելիս համեմատում ես զնեքը, չէ՞, դե բա այստեղ էլ պիտի համեմատես անվանական, փաստացի տոկոսադրույքները: Պետք է ստուգես նաև՝ տոկոսադրույքը լրացող է, հաստատուն, թե ճշգրտվող:
- **Այլ վճարներին՝** պետք է ուշադիր լինես՝ կամ այլ վճարներ, օրինակ՝ վարկի կանխիկացման վճար:

Իհարկե թեզ համար բարդ կլինի հերթով բոլոր բանկերով, վարկային կազմակերպություններով գնալ կամ կայքերն այցելել՝ վարկ ընտրելու համար: Դրա փոխարեն պարզապես այցելիր **fininfo.am** Կենտրոնական բանկի ստեղծած կայք, մուտքագրիր անհրաժեշտ պայմանները ու ստացիր և համեմատիր բոլոր առաջարկները:



Արամ. Շատ եմ լսել «անվանական» ու «փաստացի» տոկոսների մասին: Ինչ տարբերություն կա:

Ֆինանսական գուրու.

- Անվանական տոկոսադրույք՝ այն տոկոսն է, որով հաշվարկվում են թո տոկոսագումարները:
- Փաստացի տոկոսադրույք՝ ցույց է տալիս, թե ժողովրդի ասած՝ «վարկը թեզ վրա ինչքան է նստելու»՝ հաշվի է առնում վարկի հետ կապված այլ վճարները, օրինակ՝ վարկը տրամադրելու և սպասարկելու միջնորդավճարները, գրավի ձևակերպման վճարը և այլն: Այս տոկոսադրույքը հաշվի է առնում նաև ժամանակի գինը, որքան հաճախ ես մարում, այնքան բարձր է փաստացի տոկոսը:

Բանկը, վարկային կազմակերպությունը կամ գրավատունը պարտավոր են քեզ ասել, թե որքան է քո վարկի փաստացի տոկոսադրույքը, եթե վարկը սպառողական է կամ հիպոտեկային: Միշտ ուշադրություն դարձրու փաստացի տոկոսադրույքին:

Արամ. Իսկ բանկը կամ վարկային կազմակերպությունը մինչև ինձ վարկ տրամադրելը ինչն է ստուգում:

Ֆինանսական գուրու. Նրանք գնահատում են քո **վարկունակությունը**, որը կախված է.

- քո վարկային պատմությունից,
- եկամուտներից,
- կապիտալից ու ունեցվածքից,
- գրավից,
- երաշխավորներից,
- այլ անձնական հանգամանքներից:

Մի խոսքով՝ բանկը համոզվում է, որ դու կարող ես և ուզում ես վերադարձնել պարտավորությունդ:

Արամ. Իսկ ինչ է «վարկային պատմություն»-ը և «սքոր»-ը:

Ֆինանսական գուրու. Վարկային պատմությունը քո վարքագծի արխիվն է. նախկին վարկերը, մարումների ժամանակին լինելը, երաշխավոր լինելը: Այն պահվում է ԱԶՌԱ վարկային բյուրոյում և արտացոլում է միայն վերջին 5 տարիների տվյալները: Ի դեպ, դու կարող ես տարին մեկ անգամ անվճար ստանալ քո վարկային պեկույցը ԱԶՌԱ վարկային բյուրոյից, հիմա նաև առցանց:



ՍԶՌՐ-ը քո թվային գնահատականն է՝ որքանով ես վստահելի: Սքորի ձևավորման վրա ազդում են վարկերիդ քանակը և ծանրաբեռվածությունը, այսինքն՝ ունամկ ես նոր վարկ վերցնելու: Իհարկե հաշվի է առնվում, թե ինչպես ես մուծել նախորդ վարկերդ: Ազդում է նաև այն, թե որքան ժամանակ ես ունեցել վարկեր: Հետաքրքիր է նաև, որ որքան շատ դիմես վարկի, ու «վրա-վրա» բանկը կամ վարկային կազմակերպությունը հարցումներ կատարի քո մասին, այնքան կնվազի քո վարկային սքորը: Այնպես որ մի չարաշահիր վարկի համար դիմելու քանակը:

Արամ. Իսկ գրավն ու երաշխավորն ինչ դեր ունեն:

Ֆինանսական գուրու. Գրավոր բանկի ապահովությունն է. եթե չմարես, կարող են վաճառել գույքդ ու մարել վարկը: Իսկ երաշխավորը մարդ է, ով քեզ հետ պարտավորություն է ստանձնում վարկի մարման հարցում: Եթե դու չմարես վարկը, ապա նա է պարտավորվում մարել: Ուստի պետք չէ անպատասխանատու կերպով խնդրել որևէ մեկին երաշխավոր դառնալ:

Արամ. Կարո՞ղ եմ վարկս ժամկետից շուտ մարել:

Ֆինանսական գուրու. Սպառողական վարկի դեպքում միշտ կարող ես առանց տույժ ու տուգանքի շուտ մարել վարկդ: Իսկ մնացած վարկերի դեպքում կարող են գանձվել միջևորդավճարներ:

Արամ. Իսկ երբ պարտք ես վերցնում ընկերոջից ու պայմանագիր ես ստորագրում, դա էլ է վարկ համարվում:

Ֆինանսական գուրու. **Դա կոչվում է փոխառություն:** Տրվում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, կարող է լինել տոկոսով կամ անտոկոս: Գրավոր պայմանագիրն այստեղ շատ կարևոր է՝ որպեսզի դատարանում պաշտպանես թո իրավունքները: Բայց հիշիր՝ փոխառությունների դեպքում հաշտարարին դիմել հնարավոր չէ, քանի որ դրանք ֆինանսական կազմակերպության կողմից չեն տրվում:

Արամ. Շատ եմ լսել՝ բանկը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից: Դա ինչի՞ համար է, որ միայն այդ ընկերություններից վարկ վերցնես:

Ֆինանսական գուրու. Ա՛յ, ապրես դու, աչքիս ֆինանսապես գրագետ ես եթե չունեն Կենտրոնական բանկի յիջենսիան, կարող ես թո անունից վարկեր ձևակերպել, իսկ քեզ տրամադրել գումարի մի մասը միայն: Բայց պարտավորվես հետ վճարել ամբողջ գումարը: Լիցենզավորված բանկերի, վարկային կազմակերպությունների և գրավատների ցանկը կարող ես գտնել Կենտրոնական բանկի կայքում:



Լիցենզավորված բանկեր



վարկային կազմակերպություններ



գրավատների ցանկ

Արամ. Իսկ ի՞նչ անես այն մարդիկ, ովքեր հայտնվել են «վարկի ծուղակում». վերցրել են ավելի շատ վարկ, քան կարող են վճարել:

Ֆինանսական գուրու. *Դե հա, բոլորս էլ ունենք նման ընկեր, բարեկամ կամ էլ հարևան: Այդ դեպքում բարդ ժամանակներ են սպասվում, winter is coming պետք է կենտրոնանալ ու դուրս գալ այդ իրավիճակից: Դրա համար պետք է հայթայթել ավելի շատ գումար. երկրորդ աշխատանք, ավելի քիչ ծախսել: Վարկերը ժամանակին մարելուց բացի պետք է աշխատել ժամանակից շուտ մարել վարկերը՝ ծուղակից դուրս գալու համար: Կա երեք մոտեցում՝*

- **Ձևագնդի մոտեցում.** մարել փոքր վարկը, ոգեշնչվել հաջողությամբ ու անցնել մյուս վարկերին:
- **Ձևահոսքի մոտեցում.** առաջինը մարել ամենաթանկ վարկը, հետո անցնել հաջորդներին:
- **Վարկերի միավորման մոտեցում.** վերցնել մեկ մեծ վարկ՝ մյուս վարկերը մուծելու համար: Հետո մարել այդ մեկ մեծ վարկը՝ ավելի երկար ժամկետում և ավելի փոքր չափերով:

Վերջաբան

Արամը հասկացավ, որ վարկը միայն պարտք չէ, այլ նաև հնարավորություն, բայց եթե արդարացված նպատակ ունի, եթե տրամաբանական է իր եկամուտների ու ծախսերի պարագայում և պայմանները հարմար են: Այս դեպքում վարկը կարող է օգնել նրան իրականացնել տունը վերանորոգելու իր երազանքը: Բայց նա նաև հասկացավ, առանց մանրամասն հաշվարկի և փաստաթղթերը կարդալու՝ վարկ վերցնելը վտանգավոր է:

Գործնական աշխատանք

Առաջադրանք 1. Ո՞ր վարկը կընտրես

Դու ցանկանում ես գնել համակարգիչ, որի արժեքը 600,000 դրամ է: Քեզ առաջարկվում են երեք վարկերի երեք տարբերակ.

Տարբերակ	Տարեկան անվանական տոկոսադրույք	Ժամկետ	Այլ ամսական վճարներ
Ա	12%	12 ամիս	1800 դրամ
Բ	8%	18ամիս	1500 դրամ
Գ	15%	10 ամիս	1000 դրամ

Պատասխանիր հետևյալ հարցերին.

1. Ընտրիր այն տարբերակը, որը թեզ համար ամենահարմարն է և բացատրիր՝ ինչու:
2. Ո՞ր տարբերակը կունենա ամենաբարձր փաստացի տոկոսադրույքը: Փաստացի տոկոսադրույքը կարող ես հաշվարկել Կենտրոնական բանկի «Ֆինանսներ բոլորի համար» abcfinance.am կայքի վարկային հաշվիչով:



վարկային հաշվիչ

Առաջադրանք 2. Թեստ վարկերի մասին

1. Ինչպե՞ս պետք է ընտրել վարկը.

- 1)Գնալ ամենամոտ բանկն ու արագ ձևակերպել վարկը
- 2)Ընտրել հարևանի բանկն ու ամեն ինչում վստահել իրեն
- 3)Փնտրել fininfo.am կայքում և համեմատել բանկի կամ վարկային կայքում եղած տեղեկության հետ
- 4)Գնալ բոլոր բանկերով, վարկային կազմակերպություններով ու տեղում ճշտել բոլոր պայմանները

2. Ի՞նչ է վարկի փաստացի տոկոսադրույքը.

- 1)Վարկի իրական գինը
- 2)Բոլոր վարկերի համար պարտադիր հրապարակվող տոկոսադրույք
- 3)Անօգուտ տոկոսադրույք
- 4)Վարկի անվանական տոկոսադրույքը


3. Ի՞նչ անել, երբ վարկերի «տակ ճռում ես» ու չես կարողանում վճարել դրանք.

- 1)Փորձել ամեն գնով ավելացնել եկամուտներն ու կրճատել ծախսերը
- 2)Փորձել վարկերի արագ մարման մեխանիզմները. ձևագրողի, ձևահոսքի կամ վերամիավորման
- 3)Փորձել միշտ պատշաճ վճարել վարկերը
- 4)Վերանշալ բոլոր տարբերակները ճիշտ են

Ֆինանսական գեղծարարություններ և խարդախություններ

Կյանքի իրավիճակ

Արամն արդեն մի քանի տարի է, ինչ օգտագործում է մորթյալ բանկինգ, վճարային քարտեր ու կատարում առցանց գնումները: Բայց վերջերս Արամը նկատեց տարօրինակ իրադարձություններ. զանգ, որով պահանջում էին վարկի չեղարկման կող ասել, ստանում էր ներդրումային տարօրինակ առաջարկներ: Շփոթված՝ նա կրկին դիմում է Ֆինանսական գուրուին:



Արամ. Գուրու, երեկ SMS ստացա. սա ինչ է, քիչ էր մնում քարտիս տվյալները տայի, հիշեցի, որ ես ծանրոցի չեմ սպասում:

Ֆինանսական գուրու. Սա դասական **ֆիշինգ** է: Նպատակը քեզ ստիպելն է, որ հղումով անցնես և մուտքագրես քարտիդ կամ անձնագրիդ տվյալները: Այդ տվյալներով խարդախները կան դատարկում են քո հաշիվները, կան վարկ են ձևակերպում քո անունով: Երբեք մի սեղմիր նման հղումների վրա:

Արամ. Մի ուրիշ օր էլ պանգ եկավ:

Բարև Ձեզ, Ձեր բանկից ենք պանգահարում: Ձեր քարտով կարծես թե վարկ է ձևակերպվում: Եթե **Դուք չեք, հիմա Ձեզ կող կգա SMS-ով, խնդրում եմ ասել, որ չեղարկենք:**

Ես պագի, որ մի բան այն չէ ու անջատեցի:

Ֆինանսական գուրու. Ճիշտն էլ դու արեցիր, դե բա քթի ծակերը հո միայն շչեչիլու համար չեն. Սա **հեռախոսային խարդախություն** է: Բանկը կամ ոստիկանությունը երբեք չի պանգահարում քեզանից PIN, OTP (SMS-ով կամ մեյլով եկած մեկանգամյա գաղտնաբառ) կամ CVV հարցնելու: Եթե կասկածում ես, որ գուցե ճիշտ չէ, անջատիր պանզը, ինքը պանգիր բանկ պաշտոնական հեռախոսահամարով ու ճշտիր:



Արամ. Երեկ էլ facebook-ով գովապղ տեսա. «Ներդրե՞ք մեր հավելվածում ու ամեն օր կստանանք 2% եկամուտ: Ավելին՝ եթե նոր մարդ բերե՞ք, ավելի շատ շահույթ կուեննաք»: Սա կարող է իրական լինել:

Ֆինանսական գուրու. Սա **ֆինանսական բուրգ** է: Սկզբում գուցե մի փոքր գումար վերադարձնեն, որ հավատաս, բայց հետո սխեման փլուզվում է: Իրականում օրական 2% եկամուտը շատ անիրատեսական է: Եթե առաջարկը չստանալու լավ է հնչում ճշմարիտ լինելու համար, ապա այն հաստատ ճշմարիտ չէ:

Արամ. Մի քանի ամիս առաջ ընկերներիցս մեկին Instagram-ով նամակ էր գրել իր հեռավոր բարեկամը, ասում էր, որ շտապ գումար էր պետք վիրահատության համար: Ընկերս ուր որայա պատրաստվում էի ուղարկել, բայց ասացինք, որ նա նախ պանզի բարեկամին ու խոսի հետը: Պարզվեց՝ բարեկամի Instagram-յան էջը կտրված է:

Ֆինանսական գուրու. Սա **սոցիալական ցանցային խարդախություն** է: Խաբեբաները կտրորում են էջեր կամ ստեղծում կեղծ պրոֆիլներ ու գումար են մուրում: Պաշտպանվելու համար մի փոխանցիր գումար, մինչև չստուգես անձամբ: Որպեսզի ինքը չընկնես նման իրավիճակում, սոցիալական էջերիդ մուտքի համար ստեղծիր մի քանի քայլակի նույնականացում. գաղտնաբառ, վավերացված էլ. փոստ և երկփուլային նույնականացում (authenticator կամ SMS կոդ): Իսկ երբ հանդիպում ես կեղծ էջերի, անմիջապես վեկուցիր դրանց մասին սոցիալական հարթակին:

Արամ. Մի անգամ էլ սոցիալական ցանցով նամակ էր բերել. «Վճարե՞ք միայն առաքման համար, հեռախոսը ստացե՞ք անվճար»:

Ֆինանսական գուրու. Սա **առցանց գնումների խարդախություն** է: Խաբեբաները կարող են գումար գանձել, բայց ապրանքը երբեք չուղարկել: Միշտ օգտվիր միայն վստահելի հարթակներից: Երբեք մի հետևիր սոցիալական ցանցերի գովապրային հղումներին, ինքը մուտքագրիր առցանց խանութի տվյալներն ու մուտք գործիր: Ուսումնասիրիր այլ գնորդների կարծիքները և մի տրվիր չստանալու լավ առաջարկներին:

Արամ. Երբ բանկոմատից գումար էի հանում, նկատեցի ստեղնաշարի վրա տարօրինակ սարք:

Ֆինանսական գուրու. Լավ ես նկատել: Դա կարող էր լինել **սքիմինգ սարք**, որով գողանում են քարտի տվյալները: Մի օգտագործիր կասկածելի բանկոմատներ: Եթե նման բան տեսնես, անմիջապես տեղեկացրու բանկին:

Արամ. Գուրու, ընկերներիցս մեկը պատմեց, որ իր անունով վարկ էին ձևակերպել: Դա ինչ է լինում:

Ֆինանսական գուրու. Դա նույնպես խարդախություն է: Եթե խաբեբաները ձեռք բերեն թո անձնական տվյալները, միայն բանկինզի գաղտնաբառերը, կարող են վարկ ձևակերպել: Դրա համար երբեք մի տուր մեկանգամյա կոդեր, գաղտնաբառեր կամ CVV ուրիշներին: Տարին մեկ անգամ անվճար ստուգիր թո վարկային պատմությունը ԱԶՈՎ քյուրոյի միջոցով:

Արամ. Իսկ ենթադրենք, թե արդեն խաբվել եմ:

Ֆինանսական գուրու. Առաջին հերթին դադարեցրո՛ւ շփումը խարդախների հետ: Անմիջապես բլոկավորիր քարտը մոբայլ բանկինգի միջոցով և փոխիր բոլոր գաղտնաբառերը: Հետագայում վերաթողարկիր քարտդ, որ տվյալները փոխվեն: Դիմիր ոստիկանությանը և տեղեկացրո՛ւ ընկերներիդ ու հարապատներիդ, որ նրանք չընկնեն նույն թակարդի մեջ:

Վերջաբան

Այս մի քանի օրում Արամը բախվեց ամենատարածված ֆինանսական խարդախություններին. ֆիշինգ, վիշինգ (հեռախոսային խաբեություն), ֆինանսական բուրգ, սոցիալական ցանցերի կեղծ էջեր, առցանց գնումների և բանկոմատային վտանգներ: Իսկ գուրուի բացատրությունների շնորհիվ հասկացավ գլխավոր դասը. **անվճար պանիրը միշտ թակարդում է լինում:**

Գործնական աշխատանք

Առաջադրանք 1. Ինչ կանեիր դու

Պատկերացրո՛ւ՝ թո հեռախոսին ուղարկվել է հետևյալ հաղորդագրությունը.

«Ձեր հաշիվը կբլոկավորվի 24 ժամվա ընթացքում: Խնդրում ենք սեղմել հղումը և չեղարկել բլոկավորումը. www.bank-confirm-info.com»

- Ինչ քայլեր կձեռնարկես առաջին հերթին:
- Ինչպե՞ս կստուգես՝ հաղորդագրությունը իրական է, թե՞ ոչ:
- Ինչ խորհուրդ կտաս մեկ ուրիշին այս իրավիճակում:

Առաջադրանք 2. Խարդախության կանխարգելման ձևերը

Ստորև ներկայացված են ֆինանսական խարդախությունների տարբեր ձևեր:
Յուրաքանչյուրի համար նկարագրիր.

1. Ի՞նչ ֆինանսական հետևանք կարող է ունենալ գոհի համար:
2. Ի՞նչ հոգեբանական կամ սոցիալական հետևանք կարող է առաջանալ:
3. Ինչպե՞ս կարելի է կանխել այս իրավիճակը:

Խարդախության ձև	Չետևանքներ	Կանխարգելում
ա. Քարտային տվյալների գողություն		
բ. Առցանց ներդրումային խաբեություն		
գ. Սոցիալական մեդիայով շահույթ առաջարկող սխեմա		
դ. Ֆիշինգային նամակներ		
ե. Սխալ փոխանցում և գումարի վերադարձի պահանջ		

Ավանդը որպես խնայողական և ներդրումային գործիք

Կյանքի իրավիճակ

Արամն արդեն մի քանի տարի է, ինչ հետևողականորեն խնայում է իր գումարները: Նա գիտի ինչպես կազմել բյուջե, պաշտպանվել խարդախություններից ու ճիշտ օգտագործել վարկերը: Հիմա, երբ որոշակի գումար է կուտակել, նա մտածում է այն ոչ միայն պահելու, այլև եկամուտ ստանալու մասին: Այդ պատճառով Արամը հետաքրքրվում է բանկային ավանդներով: Սակայն առաջանում է կարևոր հարց, ինչպես ընտրել ճիշտ ավանդը:



Արամ. Գուրու, նախ կասե՞ս ինձ՝ ի՞նչ է ավանդը և ի՞նչ կարող է դա ինձ տալ:

Ֆինանսական գուրու. Արամ ջան, խնայված գումարը «պահելու» բազմաթիվ եղանակներ կան: Եթե պահես այն տանը, ապա մեծ է հավանականությունը ծախսելու, կորցնելու, չի բացառվում՝ նաև գողանալու տարբերակը: Բացի այդ, դա քո համար «չի գոյացնում» հավելյալ եկամուտ, հակառակը՝ գնաճի պատճառով կարող է կորցնել իր արժեքը. եթե առաջ այդ գումարով կարող էիր գնել 3 ապրանք, ապա այժմ գուցե չհաջողվի՝ գների բարձրացման պատճառով, քանիզ գներն աճում են, իսկ տանը պահված գումարը մնում է նույնը: Իսկ եթե քո խնայած գումարը որպես ավանդ ներդնես բանկում, ապա կստանաս տոկոսային եկամուտ:

Ավանդ ընդունելով՝ բանկը պարտավորվում է թեզ վերադարձնել ինչպես ավանդի գումարը, այնպես էլ պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով դրանց դիմաց վճարել տոկոսագումար (այսպես կոչված՝ տոկոս):

Արի տեսնեսք, թե ինչ հնարավորություններ են ավանդները մեզ «առաջարկում»:

■ Հավելյալ եկամուտ

Գումարը որպես ավանդ ներդնելով՝ մենք դրա միջոցով հավելյալ փողի ստեղծման հնարավորություն ենք ստանում, քանի որ մեր միջոցների դիմաց բանկը մեզ տոկոսներ (տոկոսավճարներ) է տրամադրում: Թե՛ն որ բանկը ինչ պայմաններով է ավանդ առաջարկում, կարող եք փնտրել, գտնել ու համեմատել fininfo.am կայքում:

■ Պաշտպանվածություն գնաճից

Եթե թո ունեցած 50 000 դրամով նախկինում կարող էիր լավ հեծանիվ գնել, ապա այժմ գուցե դա արժենա 60 000 դրամ: Եթե տանը պահեստ գումարը, ապա դա կամաց-կամաց կկորցնի իր արժեքը, և չես կարողանա գնել նույն ապրանքներն ու ծառայությունները, ինչ՝ առաջ: Սա կոչվում է գնողունակության անկում: Ավանդի դիմաց տրվող տոկոսները մասամբ ուղղված են հենց այս խնդրի լուծմանը, քանի որ դրանք նպատակ ունեն «փոխհատուցելու» գնաճի հետևանքները:

■ Հասանելիություն

Ավանդատուն կարող է ցանկացած պահի բանկից պահանջել իր ավանդի մայր գումարը: Ինչ վերաբերում է վաստակած տոկոսներին, ապա հարկ է ուշադրություն դարձնել պայմանագրով նախատեսված կետերին, քանի որ գումարը սահմանված ժամկետից շուտ պահանջելու դեպքում հնարավոր են տոկոսադրույքի կամ այլ պայմանների փոփոխություններ:

■ Ապահովություն

Ավանդի հետստացումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից օրենքով նախատեսված սահմանաչափով: Այդ սահմանաչափերը պարբերաբար վերանայվում են. այս պահին ունենք հետևյալ պատկերը՝

1. Միայն դրամային ավանդ ունենալու դեպքում դա երաշխավորվում է մինչև 16.000.000 ՀՀ դրամի չափով:
2. Միայն արտարժությալի ավանդը երաշխավորվում է մինչև 7.000.000 ՀՀ դրամի չափով:
3. Միաժամանակ և՛ դրամային, և՛ արտարժությալի ավանդ ունենալու դեպքում երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16.000.000 ՀՀ դրամի չափով, եթե գերազանցում է 7.000.000 ՀՀ դրամ սահմանաչափը: Եթե դրամային ավանդը պակաս է 7.000.000 ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է ամբողջությամբ, իսկ արտարժությալի ավանդը երաշխավորվում է 7.000.000-ի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Երաշխավորված ավանդի հատուցումը կարող է կատարվել և՛ կանխիկ, և՛ անկանխիկ՝ ավանդատուի (թո) նշած հաշվին փոխանցման միջոցով: Կարևոր է իմանալ, որ ավանդները տարբեր բանկերում ներդնելու դեպքում դրանք երաշխավորվում են առանձին-առանձին, մինչդեռ միևնույն բանկում պահվելու պարագայում համարվում են մեկ միասնական ավանդ:

Արամ. *Իսկ ավանդի ինչ տեսակներ կան:*

Ֆինանսական գուրու. *Խնայելու նպատակից կախված՝ կարելի է ընտրել տարբեր ավանդներ: Դրանք լինում են ժամկետային, ցպահանջ և ինսայողական:*

■ **Ժամկետային ավանդներ**

Դրանք նախապես սահմանվող ժամկետով ավանդներն են: Այս հաշիվներն առաջարկում են ավելի բարձր տոկոսադրույքներ, քան ցպահանջ ավանդներն ու ինսայողական հաշիվները: Միևնույն ժամանակ կարող են լինել սահմանափակումներ՝ ավանդի գումարը շուտ ստանալու կամ գումարն ավելացնելու և նվազեցնելու հետ կապված: Օրինակ՝ բանկը կարող է թույլ տալ գումար ավելացնել ավանդին, սակայն ոչ վերջին երեք ամիսների ընթացքում: Բոլոր նրբությունները հասկանալու համար անհրաժեշտ է մանրամասն դիտարկել տվյալ բանկի տվյալ ավանդի պայմանները:

■ **Ցպահանջ ավանդներ**

Ցպահանջ ավանդի դեպքում գումարը, նաև տոկոսագումարը, եթե առկա է, կարող եք հետ ստանալ ցանկացած պահի՝ ըստ պահանջի: Մեր բանկային քարտերի հաշիվները ևս ցպահանջ ավանդի օրինակներ են:

■ **Ինսայողական կամ կուտակային հաշիվ**

Սա նախորդ երկուսի յուրահատուկ համադրությունն է. ապահովում է ավելի բարձր եկամուտ, քան ցպահանջ ավանդները, միևնույն ժամանակ ցանկացած պահի կարող ես գումար ավելացնել հաշվին կամ նվազեցնել հաշվից, սակայն որոշակի սահմանափակ քանակով:

Ցպահանջ և ինսայողական հաշիվների հիմնական տարբերությունն այն է, որ ցպահանջ հաշիվները նախատեսված են ամենօրյա օգտագործման, օրինակ՝ գնումներ կատարելու համար, մինչդեռ ինսայողական հաշիվները երկարաժամկետ ինսայողություններ կատարելու համար են: Գումարի մի մասը ինսայողական հաշվում պահելը հիանալի միջոց է արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու կամ խոշոր գնումներ կատարելու, նպատակներն իրագործելու պարագայում. սահմանափակ հասանելիությունը կխոչընդոտի դա ծախսել ամենօրյա կարիքների համար:

Արամ. *Ինչ են ավանդի պարզ և բարդ տոկոսները*

Ֆինանսական գուրու. *Ավանդի պարագայում բանկը, սահմանված հաճախականությամբ, ավանդատուին վճարում է տոկոսներ, որոնք հաշվարկվում են ըստ ներդրված ավանդի մայր գումարի: Տոկոսավճարները կարող են հաշվարկվել երկու եղանակով՝ պարզ տոկոսով և բարդ (կապիտալացվող) տոկոսով:*

Պարզ տոկոսները հաշվարկվում են ավանդի միայն մայր գումարի հիման վրա:

Օրինակ՝ Արամը 3 տարի ժամկետով 100 000 դրամ գումար է ներդրել մի բանկում, որն առաջարկում է 8% եկամտաբերություն: Այս դեպքում մեկ տարում՝ նրա վաստակած տոկոսագումարը կլինի՝

$$100\ 000 * 8\% = 8\ 000 \text{ դրամ,}$$

$$\text{երեք տարում՝ } 100\ 000 * 8\% * 3 = 24\ 000 \text{ դրամ:}$$

Ի տարբերություն նախորդի՝ **բարդ տոկոսները** հաշվարկվում են մայր գումարի և նախորդ ժամանակաշրջանների ընթացքում կուտակված տոկոսների հիման վրա:

Օրինակ՝ Կոմիտասը ներդրել է 100 000 դրամ՝ 8% բարդ տոկոսադրույքով:

Դա նշանակում է՝ ամեն տարի նրա վաստակած տոկոսագումարներն ավելացվելու են մայր գումարին, և նոր գումարով է հաշվարկվելու մյուս տարվա տոկոսը: **Մեկ տարի անց** նրա վաստակած գումարը կլինի՝

$$100\ 000 * 8\% = 8\ 000 \text{ դրամ:}$$

Երկրորդ տարվա տոկոսը արդեն կհաշվարկվի ոչ թե սկզբնական 100 000 դրամի, այլ $100\ 000 + 8\ 000 = 108\ 000$ դրամի նկատմամբ՝

$$108\ 000 * 8\% = 8\ 640 \text{ դրամ:}$$

Երրորդ տարվա տոկոսը կլինի՝

$$(108\ 000 + 8\ 640) * 8\% = 9\ 331 \text{ դրամ:}$$

Այսպիսով՝ Կոմիտասը 3 տարիների ընթացքում կստանա՝

$$8\ 000 + 8\ 640 + 9\ 331 = 25\ 971 \text{ դրամի չափով տոկոս, այսինքն՝ } 1\ 971$$

դրամով ավելի շատ, քան պարզ տոկոսադրույքի պարագայում: Հետևաբար՝ բարդ տոկոսի դեպքում միևնույն չափով և ժամկետով ներդրված գումարն ավելի մեծ տոկոսային եկամուտ է ապահովում: Փաստորեն՝ երբ խոսքը վերաբերում է երկարաժամկետ ներդրումներին, բարդ տոկոսով ավանդ ներդնելը կարող է հարստության ստեղծման լավ գործիք լինել:

Ի դեպ, որքան հաճախ Կոմիտասի վաստակած տոկոսագումարներն ավելացվեն մայր գումարին (սա կոչվում է կապիտալացում), այնքան ավելի շատ գումար նա կաշխատի: Այսպես՝ կիսամյակային կամ եռամսյակային կապիտալացումն ավելի ձեռնտու է, քան տարեկան կապիտալացումը: Սակայն ուշադրություն դարձրու բանկի առաջարկած պայմաններին. երբեմն տարեկան կապիտալացման դեպքում գործող տոկոսադրույքը տարբերվում է ամսական կապիտալացում ընտրելու դեպքում գործող տոկոսադրույքից:

Արամ. Իսկ կարող եմ ցանկացած բանկում դնել:

Ֆինանսական գուրու. Այո: Կարող ես ընտրել տարբեր բանկերից, համեմատել պայմանները fininfo.am կայքում և ընտրել ամենահարմարը: Պետք է ներկայացնես անձնագիր կամ ID քարտ ու կնքես պայմանագիր:

Արամ. Գորու հին է անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը

Ֆինանսական գուրու. Արամ ջան, հաճախ շփոթություն է առաջանում անվանական տոկոսադրույքը և տարեկան տոկոսային եկամտաբերությունը տարբերակելիս: Վերջինս ցույց է տալիս, թե որքան է ավանդի փաստացի եկամտաբերությունը պարտադիր վճարները հանելուց և ստացված տոկոսագումարներն ավանդի մայր գումարին ավելացնելուց հետո: Ենթադրենք՝ անվանական տոկոսադրույքը սահմանված է 12%, բայց կապիտալացումը կատարվում է ամսական կտրվածքով. դա չի նշանակի, որ տարեկան եկամտաբերությունը ևս կազմելու է 12%: Պարզ է՝ որքան հաճախ է կատարվում կապիտալացումը, այնքան բարձր կլինի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: Դիտարկենք հետևյալ օրինակը.

	Ավանդ I	Ավանդ II
Ապահովագրական օբյեկտի արժեք	100 000	100 000
Ապահովագրական գումար	12 %	12 %
Ապահովագրական գումար / օբյեկտ	24 ամիս	24 ամիս
Վնասի մեծություն	Տարեկան	Ամսական
Հատուցման մեծություն	1200	1200
	11,33%	12.01%

Առաջին հայացքից թվում է, թե երկու ավանդներն էլ նույնն են: Իրականում երկրորդ ավանդն ավելի եկամտաբեր է, քանի որ, եթե ամեն ամիս ավելացնեք տոկոսագումարն ավանդին, կստանաք լրացուցիչ եկամուտ, մինչդեռ առաջին ավանդի դեպքում տոկոսը վճարվում է միայն տարվա վերջում: Այսպիսով՝ ավանդ ներդնելիս հարկ է հաշվի առնել նաև ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը:

Արամ: Իսկ ինչ կլինի, եթե ժամկետից շուտ վերցնեմ ավանդը:

Ֆինանսական գուրու. Կարևոր է հիշել, որ ավանդի տեսակներից ժամկետային ավանդն է, որը սահմանում է պայման, որ այդ ժամկետից հետո վերցնես թո՛ւ մայր գումարն ու տոկոսները: Նշեմ, որ դու իրավունք ունես ստանալու թո՛ւ մայր գումարը ամեն պահի՝ իհարկե բանկի կողմից սահմանած պայմանները պահպանելով, սակայն ինչ է լինում տոկոսագումարների հետ, երբ ժամկետից շուտ ես ցանկանում ստանալ ավանդի գումարն ու տոկոսները:

Այդ դեպքում ստացվում է, որ դու չես կատարում պայմանագրային պարտավորությունը՝ ժամկետը պահելու մասով, ուստի դա կարող է ունենալ տարբեր հետևանքներ: Որոշ բանկեր կարող են թե՛ վճարել մինչ այդ հաշվարկած տոկոսները, որոշները կարող են փոփոխել տոկոսը և ավելի ցածր տոկոսով հաշվարկել: Այսպիսով՝ հարկավոր է նախապես ուշադրություն դարձնել պայմանագրում նշված կետերին, որպեսզի հետագայում խուսափես անսխառօրություններից:

Արամ: Ավանդից ստացված եկամուտս հարկվո՞ւմ է:

Ֆինանսական գուրու. Ներդրված ավանդի արդյունքում ստացված տոկոսագումարները ենթակա են հարկման եկամտային հարկով: Հայաստանում ավանդի պարագայում գործում է 10% դրույթաչափը:

Օրինակ՝ Արամ ջան դու ավանդ ես ներդրել 250 000 դրամի չափով և 7% տարեկան տոկոսային եկամտաբերությամբ: Քո վաստակած տոկոսագումարը մեկ տարի անց կլինի՝

$$250\ 000 * 7\% = 17\ 500 \text{ դրամ:}$$

Այս գումարի 10%-ը՝ 1 750 դրամը, մեկ տարի անց կփոխանցվի պետությանը՝ որպես եկամտային հարկ, և դու կստանաս՝

$$250\ 000 + 17\ 500 - 1\ 750 = 265\ 750 \text{ դրամ գուտ տոկոսային եկամուտ:}$$

Արամ: Իսկ ինչպե՞ս կարող եմ խնայել հեշտ՝ առանց շատ գործողությունների:

Ֆինանսական գուրու. Ներկայումս շատ բանկային ծառայություններ ավտոմատացվում են՝ դրանք սպառողին առավել հեշտ և հասանելի դարձնելու համար: Ավտոմատացում նշանակում է այս կամ այն գործընթացի ինքնաբերական իրականացում:

Բանկային որոշ ծառայություններ ավտոմատացնելով՝ դու ամեն անգամ բանկ չես այցելում հերթական գործարքը կատարելու համար: Հոգեբանները և վարքագծային տնտեսագետները կարծում են՝ եթե խնայելը ևս ավտոմատացվի, այսինքն՝ ամեն ամիս առանց թո՛ւ միջամտության գումարն ավտոմատ փոխանցվի խնայողական կամ ավանդային հաշվին, ապա ավելի հավանական է, որ դու կխնայես կանոնավոր կերպով և չես կորցնի հավելյալ գումար աշխատելու հնարավորությունը:

Խնայողությունների ավտոմատացումը կարելի է իրականացնել, օրինակ, Մոբայլ բանկինգի (Mobile Banking) միջոցով՝ հետևյալ քայլերով.

- Նախ բացիր ավանդային կամ խնայողական հաշիվ, ձեռք բեր հաշվեհամար:
- Մոբայլ բանկինգում գտիր **վճարումներ** բաժինը, ավելացրու՝ պարբերական վճարում ավանդային կամ խնայողական հաշվեհամարին:
- Նշիր այն գումարը, որը ցանկանում ես ամեն ամիս պարբերաբար փոխանցել այդ հաշվին:

Կարող ես նաև մոտենալ բանկի մասնաճյուղ՝ այս ամենը բանկի աշխատակցի օգնությամբ կատարելու:

Այսպիսով, Մոբայլ բանկինգը թույլ է տալիս իրականացնել ֆինանսական գործարքներ՝ օգտագործելով հեռախոս կամ պլանշետ, որոնցում առկա է անհրաժեշտ հավելվածը: Օրինակ՝ հավելվածի միջոցով կարող ես ընտրել այնպիսի կարգավորումներ, որոնք շնորհիվ ամեն ամիս փոխանցվող աշխատավարձի 10%-ը կանցնի խնայողական: Արդյունքում՝ կխուսափես խնայողության համար նախատեսված գումարը ծախսելուց, կկատարես խնայողություններ ու կլինես ֆինանսապես ավելի ապահովված թե՛ ներկա պահին, թե՛ ապագայում:

Արամ. *Իսկ ինչպե՞ս կարող եմ խնայել հեշտ՝ առանց շատ գործողությունների:*

Ֆինանսական գուրու. *Արամ ջան ծանոթացիր չգրված կանոններին՝*

1. Պայմանագրերի պայմանները իմանալը քո պատասխանատվությունն է: Անպայման ուշադիր կարդա բոլոր կետերը և վերցրու՝ քո օրինակը:
2. Ժամանակը ոսկի է. ժամանակդ խնայելու լավ տարբերակ է Մոբայլ բանկինգը: Դու կարող ես ներդնել ավանդներ առանց տնից դուրս գալու:
3. Համեմատիր ավանդների տարբեր տեսակները և դրանց առավելությունները finino.am կայքում՝ նպատակներիդ համապատասխան ավանդ ներդնելու համար:
4. Բոլորին ձեռնտու խնայողական գործիքներ չկան, դրանք ունեն և՛ առավելություններ, և՛ սահմանափակումներ:
5. Ավանդդ ներդրված բանկի անվճարունակ դառնալու դեպքում գումարդ չի կորում: Ավանդներդ հատուկ սահմանաչափերով երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:
6. Ձգտիր ավելի բարձր տոկոսադրույթով ավանդներ ունենալ՝ եկամուտիդ աճը առավելագույնի հասցնելու համար:
7. Սկսիր վար: Խնայողական հաշիվներում գումար ներդնելը վաղաժամ սկսելը կօգնի ավելի վստահ քայլերով պլանավորել քո բարեկեցիկ ապագան:
8. Ավանդ դնելը դարձրու՝ սովորություններիցդ մեկը: Դա կարող ես անել Մոբայլ բանկինգի միջոցով՝ ավտոմատացնելով խնայողություններդ:

- 9. Հետևյալ քաղվածքներին: Հետևյալ ավանդներում ներդրված գումարիդ աճին և տոկոսագումարներին:
- 10. Խնայիր եկամուտը ստանալուց անմիջապես հետո, որպեսզի չծախսես այն:

Վերջաբան

Արամը այս օրերին ուսումնասիրեց ավանդների տարբեր տեսակները՝ ժամկետային, ցայահանջ և խնայողական հաշիվ: Նա հասկացավ, որ ավանդը ոչ միայն ապահովում է գումարի պահպանությունը, այլև հնարավորություն է տալիս այն ավելացնել: Միևնույն ժամանակ Արամը տեղեկացավ, որ ավանդները օրենքով երաշխավորված են սահմանված չափով, իսկ դրանց տոկոսները ենթակա են հարկման:

Գործնական աշխատանք

Առաջադրանք. Ավանդի տոկոսագումարի հաշվարկ

Դու ունես ավանդ բանկում՝ հետևյալ պայմաններով:

- Գումար՝ 100 000 դրամ
- Տոկոսադրույք՝ 8% տարեկան բարդ տոկոս
- Ժամկետ՝ 1 տարի

Հաշվիր, թե որքան եկամուտ կունենաս տարվա վերջում, եթե տոկոսները հաշվեգրվում են.

1. Ամսական
2. Կիսամյակային
3. Տարեկան

Պատասխանիր հետևյալ հարցերին.

- Նշիր յուրաքանչյուր տարբերակի համար վերջնական եկամուտը, որը կստացվի ավանդից
- Գնահատիր, թե ո՞ր տարբերակն է ավելի շահավետ և ինչու՞

Խաղ.

Արի միասին խաղանք «Խնայողությունների խաղը»: Բացիր տուփը և այնտեղ կգտնես խաղի կանոնները:

Առաջադրանք 2. Լրացրու՝ բաց թողնված տողերը:

1. Ընտրե՞ք Ձեր կյանքի մեկ կարեւոր նպատակ, որին կարող է օգնել քարտը լավ օգտագործելը:

2. Ինչո՞ւ է դա Ձեզ համար հատկապես կարեւոր:

3. Ինչպե՞ս կհասկանաք, որ հասել եք այդ կարեւոր բանին:

4. Որքանո՞վ է այդ նպատակը ԽԵԼԱՑԻ:

Հստակ ձեւակերպված	
Չափելի	
Հասանելի	
Տեղին	
Վերջնաժամկետով	

5. Դիտարկե՞ք «Ինչպե՞ս լավ օգտագործել քարտս» թերթնը եւ գրե՞ք 5 կարեւոր քայլեր, որոնք Ձեզ կօգնեն հասնել այդ նպատակին՝


6. Գրե՞ք քարտին առնչվող երեք քայլեր, որ կանեք մոտակա շաբաթվա ընթացքում՝ նպատակին հասնելու համար:

Ներդրումներ և երկարաժամկետ պլանավորում



Կյանքի իրավիճակ

Արամը, ով արդեն գիտակցաբար է կառավարում իր բյուջեն, ունի խնայողություններ և ծանոթ է ավանդների հնարավորություններին, սկսեց ավելի լայն մտահոգվել իր ապագայի ֆինանսների մասին: Նա հասկացավ, որ միայն խնայողությունները միշտ չէ, որ բավարար են, պետք է մտածել երկարաժամկետ: Հենց այդ պատճառով Արամը սկսեց հետաքրքրվել ներդրումներով՝ որպես հնարավորություն իր խնայողություններին աճի և զարգացման նոր ուղիներ տալու:



Արամ: Գուրու, ես ուզում եմ գումարս ներդնել տարբեր ակտիվներում, բայց ոչինչ չեմ հասկանում:

Ֆինանսական գուրու: Նախ Արամ ջան, արի հասկանանք, թե ինչ է ներդրումը.

Ներդրումը ռեսուրսների նպատակային օգտագործումն է՝ ներկայիս սպառումը նվազեցնելու և դրանք ապագա օգուտներ կամ եկամուտ ապահովելու համար: Այլ կերպ ասած՝ խնայողության օգտագործումն է եկամուտ կամ շահույթ վաստակելու համար:

Ներդնել նշանակում է տեղաբաշխել ֆինանսական կամ նյութական ռեսուրսները՝ ապագայում ավելի մեծ գումար վաստակելու համար:

Ներդրում կատարելով՝ դու ձեռք ես բերում որևէ ներդրումային գործիք, օրինակ՝ բաժնետոմս, պարտատոմս և այլն, կամ ստանում ես որևէ առարկա (բնակարան, ժամացույց, գինի և այլն)՝ ապագայում եկամուտ ապահովելու նպատակով: Ընդ որում՝ եկամուտ կարելի է ձեռք բերել երկու եղանակով. կամ այդ առարկայի օգտագործման դիմաց ստացվող վճարներից, կամ պարզապես դրա գնի բարձրացումից: Օրինակ՝ դու ձեռք ես բերել որևէ ընկերության բաժնետոմս, այսինքն՝ դարձել ես տվյալ ընկերության բաժնետեր, որը թեզ տալիս է ձայնի և շահաբաժիններ ստանալու իրավունք: Այս դեպքում եկամուտը կլինի պարբերաբար թեզ վճարվող շահաբաժինը (զուտ շահույթի մի մասը թոզ կհատկացվի որպես ներդրողի), եթե, իհարկե, ընկերությունը հատկացնում է շահաբաժին: Սակայն հետագայում հնարավոր է նաև վաճառել բաժնետոմսն ավելի բարձր գնով, ինչն էլ կլինի բաժնետոմսի արժեքի բարձրացման արդյունքում ստացվող եկամուտը:

Արամ: Ո՞ր գործիքներում կարող եմ ներդնել գումարս:

Ֆինանսական գուրու: Հիմա ես կթվարկեմ ամենատարածվածները.

1. Բաժնետոմս

Բաժնետոմսն արժեթուղթ է, որը ձեռք բերելով՝ դու ստանում ես իրավունք.

- ստանալու տվյալ ընկերության շահույթի մի մասը (շահաբաժին),
- մասնակցելու տվյալ ընկերության կառավարմանը (սովորական բաժնետոմսերի պարագայում),

եթե այդ ընկերությունը լուծարվի, դու իրավունք ես ունենում ստանալու մնացած գույքի մի մասը:

Հարմար է, եթե պատրաստ ես ռիսկի գնալ՝ երկարաժամկետ եկամուտ ստանալու համար:

2. Պարտատոմս

Դու կարծես պարտքով փող ես տալիս կառավարությանը կամ որևէ մի ընկերությանը: Նրանք քեզ խոստանում են որոշ ժամանակ հետո գումարը վերադարձնել և դրա դիմաց քեզ տրամադրել տոկոսագումարներ: Այն հարմար է, եթե նախընտրում ես կայունություն և կանխատեսելի եկամուտ:

3. Ավանդ

Ավանդ ընդունելով՝ բանկը պարտավորվում է քեզ վերադարձնել ինչպես ավանդի գումարը, այնպես էլ պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով դրանց դիմաց վճարել տոկոսագումար (այսպես կոչված՝ տոկոս):

Նպատակից կախված՝ կարելի է ընտրել տարբեր պայմաններ առաջարկող ավանդներ: Դրանք լինում են ժամկետային, ցպահանջ և ինսայդական:

4. Բորսայական առևտրային ֆոնդում ներդրումներ՝ ETF (Exchange Traded Fund)

Պատկերացրու՝ դու գնում ես ոչ թե մի ընկերության բաժնետոմս, այլ մի ամբողջ «զամբյուղ», որտեղ կա Apple, Microsoft, Google-ի բաժնետոմսեր և այլ արժեթղթեր: Այս ֆոնդերը վաճառվում են բորսայում և թույլ են տալիս միանգամից դիվերսիֆիկացնել քո ներդրումը:

Հարմար է սկսնակների համար, ովքեր ուզում են ներդնել բայց կոնկրետ ընկերություն ընտրելու համարձակություն չունեն:

5. Կրիպտոակտիվներ

Պատկերացրու՝ դու ներդրում ես անում թվային արժույթների մեջ, օրինակ՝ Bitcoin, Ethereum կամ այլ կրիպտոարժույթներ: Դրանք չունեն կենտրոնական կառավարում և դրանց արժեքը շատ արագ կարող է աճել կամ նվազել՝ կախված պահանջարկից և շուկայի տրամադրությունից: Կրիպտոակտիվները համարվում են բարձր ռիսկային գործիք, բայց նաև ունեն բարձր եկամտաբերության հնարավորություն: Հարմար են այն ներդրողների համար, ովքեր ունեն բարձր ռիսկի այտորժակ:

Արամ. *Իսկ ինչպե՞ս սկսեմ իմ ներդրումային ուղին:*

Ֆինանսական գուրու. *Արամ ահա 7 քայլով ամփոփված ներդրումային ուղին.*

Քայլ 1. Այցելիր Կենտրոնական բանկի պաշտոնական կայքը

- Մուտք գործիր www.cba.am և փնտրիր «ներդրումային ընկերություններ»:
- Անցիր ընկերությունների կայքէջերով և առանձնացրու նրանք, որոնց հետ կցանկանաս կապ հաստատել:

Քայլ 2. Կապվիր ընկերությունների հետ

- Չանգիր կամ ուսումնասիրիր իրենց կայքը՝ պարզելու համար նրանց կողմից առաջարկվող ծառայությունները, դրանց վճարներն ու պայմանները:
- Հարցրու, թե ինչպես են գործում ֆինանսական գործիքները, ինչ ռիսկեր կան, ինչպես են վերադարձնում գումարը և ինչպես է հաշվարկվում եկամուտը:

Քայլ 3. Պատրաստիր ներդրումային պլան

- Ընտրիր նպատակը՝ կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ:
- Գնահատիր, թե որքան գումար ես պատրաստ ներդնել սկզբնական փուլում:

Քայլ 4. Գնահատիր ռիսկի ախորժակը

- Ինքնուրույն կամ թեստով պարզիր՝ որքան ռիսկ կարող ես հանդուրժել:
- Ընտրիր գործիքներ, որոնք համապատասխանում են քո ռիսկի պրոֆիլին:

Քայլ 5. Սկսիր փոքր ներդրումներից

- Ներդրու փոքր գումար՝ օրինակ՝ 20,000 դրամ:
- Վերահսկիր, թե ինչպես է աշխատում համակարգը, հետևիր եկամտիդ և տատանումներին:

Քայլ 6. Հետևիր պորտֆելիդ

- Ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ նայիր՝ ինչ է կատարվում ներդրումիդ հետ:
- Գնահատիր, արդյոք նպատակդ կատարվում է, թե՞ անհրաժեշտ է փոփոխություն կատարել:

Քայլ 7. Բարձրացրու ներդրման չափը և բաշխիր դրանք

- Հաջորդ ներդրումներդ բաժանիր տարբեր գործիքների միջև՝ բաշխելով ռիսկը և բարձրացնելով հնարավոր եկամուտը: Օրինակ՝ մի մասը բաժնետոմսերում, մի մասը պարտատոմսերում, մի փոքր մասն էլ պահիր ավանդային հաշվում:

Արամ. *Իսկ գումարս հաստատ չեմ կորցնի:*

Ֆինանսական գուրու. *Նախ, շատ կարևոր է, որ գնահատես քո ռիսկի ախորժակը: Ներդրումներ կատարելու ճիշտ ռազմավարություն ընտրելու համար պետք է իմանաս՝ որքան ես պատրաստ հանդուրժելի հնարավոր կորուստները հանուն եկամուտների: Եթե ներդրումդ կորցնելու հնարավորությունը քեզ չի վախեցնում, և դու տեսնում ես*

Վերջաբան

Արամը բացեց իր առաջին քարտը, սովորեց տարբեր գաղտնի կոդերի նշանակությունը և առաջին անգամ վճարեց ուսման վարձը անկանխիկ: Հիմա նա վստահ է օգտագործում իր քարտը, իրականացնում է առցանց գնումներ, օգտվում է մոբայլ բանկինգից և գիտի, թե ինչպես պաշտպանել իր գումարները:

Գործնական աշխատանք

Առաջադրանք 1. Նշիր, թե որ քարտը որ դեպքում է ավելի հարմար:

Ընտրիր ամենահարմար քարտի տեսակը յուրաքանչյուր իրավիճակի համար.

Դեբետային քարտ, թվային քարտ, կենթոշակային քարտ, հաշվարկային քարտ, կից քարտ, ուսանողական քարտ

- ուսանողի կրթաթոշակի ստացման համար -
- կարճաժամկետ վարկ վերցնելու համար -
- աշխատավարձը ստանալու համար -
- ապահով առցանց վճարումներ կատարելու համար -
- 12 տարեկան երեխայի ծախսերի համար -
- թոշակ ստանալու համար -

Առաջադրանք 2. Քարտի հր տվյալը/կոդն ինչի համար է, որոնք են դրանցից գաղտնի:


CVV կոդ	
Հաշվեհամար	
Վավերականության ժամկետ	
PIN կոդ	
Մեկանգամյա գաղտնաբար (OTP)	
Բանկային գաղտնաբառ	
Քարտի վրայի թվեր	

- **Պասիվ ներդրողը** ներդրումը կատարում է երկարաժամկետ՝ առանց հաճախակի փոփոխությունների: Օրինակ՝ գնել բաժնետոմսեր և տարիներ շարունակ պահել: Սա ավելի կանխատեսելի է:

Արամ. Կամ խնայողությունները պահելու կամ ներդրումներ կատարելու լավագույն գործիք:

Ֆինանսական գուրու. Եթե քեզ որևէ մեկն ասի, որ ներդրումներ կատարելու կամ խնայողությունները տեղաբաշխելու որևէ գործիք շատ ձեռնտու է բոլորի համար, ապա մի հավատա, բանկի ամեն գործիք ունի իր առավելություններն ու սահմանափակումները:

Սովորաբար այն գործիքները, որոնք ավելի ապահով են, և ամեն պահի կարելի է օգտագործել գումարը, առաջարկում են ցածր եկամուտ: Այն գործիքները, որոնք համարվում են ռիսկային, սովորաբար նաև բարձր եկամուտ են առաջարկում: Հենց այս օրինակափոխությունն էլ առկա է անհնարին եռանկյունու հիմքում:



Անհնարին եռանկյունու երեք գագաթներում ներդրումային գործիքները բնութագրող հիմնական հատկանիշներն են՝

- Եկամտաբերություն. որքան հավելյալ գումար կաշխատես, եթե ընտրես այդ գործիքը:
- Ապահովություն. որքան է հավանականությունը, որ դու հետ կստանաս ներդրած գումարները:
- Հասանելիություն. որքանով է գումարն ամեն պահի ձեռքի տակ և կարելի է օգտագործել:

Ըստ այս տեսության՝ անհնար է գտնել որևէ ներդրումային կամ խնայողական գործիք, որը կառաջարկի բոլոր երեք հնարավորությունները միաժամանակ. թե որ հնարավորությունն ավելի կկարևորես, կախված է քո նախասիրություններից: Օրինակ՝ դու ցանկանում ես երեխայի համար գումար խնայել, որ նա 15 տարի անց լավ կրթություն ստանա: Այս պարագայում հավանական է, որ կկարևորես ապահովությունը և բարձր ու կայուն եկամտաբերությունը, որոնք էլ առաջարկում են բանկային ավանդները:

Իսկ եթե երկարաժամկետ և բարձր եկամտաբերության արդյուր ես փնտրում, ապա հավանական է, որ կնախընտրես ձեռք բերել որևէ կազմակերպության բաժնետոմս:

Դա կարող է ապահովել բարձր եկամուտ, բայց լինել ռիսկային, ինչպես նաև ամեն պահի հնարավոր չի լինի ստանալ գումարն ու ծախսել:

Արամ. *Լավ, իսկ ինչպե՞ս է աշխատում կենսաթոշակային համակարգը: Դա էլ է չՔ համարվում երկարաժամկետ խնայողություն:*

Ֆինանսական գուրու. *Սիրելի Արամ, այո, կենսաթոշակը համարվում է երկարաժամկետ խնայողություն և Հայաստանում արդեն իսկ գործում է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, և դու անկախ ամեն ինչից արդեն սկսել ես կուտակել ապագայի համար:*

Կուտակային համակարգը հասկանալու համար պետք է իմանա 5 հիմնական հասկացություն. ՊԵԿ (Պետական եկամուտների կոմիտե), սոցիալական վճար, կենսաթոշակային ֆոնդ, ֆոնդի կառավարիչ, Կենտրոնական դեպոզիտարիա: Երբ ունեն արդեն աշխատանք, քո աշխատավարձից կատարվում է սոցիալական վճար՝ **10%**.

- 5%-ը վճարում ես դու,
- 5%-ը՝ պետությունը:

Բայց եթե քո աշխատավարձը գերազանցում է 500.000 դրամը, պետությունը վճարում է ֆիքսված **25.000 դրամ**, իսկ մնացած մասը լրացնում ես դու:

Այս գումարները ՊԵԿ-ը փոխանցում է **Կենտրոնական դեպոզիտարիային**, որը համակարգի ուղեղն է: Այնուհետև քո կուտակումը փոխանցվում է քո ընտրած **ֆոնդին**, իսկ ֆոնդի կառավարիչը արդեն ներդրում է անում տարբեր գործիքներում՝ ապահովելու համար եկամտաբերություն ու նվազեցնելու ռիսկերը:

Հայաստանում գործում են երկու ֆոնդերի կառավարիչներ՝ **ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ** և **ՑԵ-Կվադրատ Ամպեգա**: Նրանցից յուրաքանչյուրն առաջարկում է երեք տեսակի ֆոնդ.

- **Կայուն եկամտային** – քիչ ռիսկ, հիմնականում ավանդներ ու պարտատոմսեր:
- **Պահպանողական** – միջին ռիսկ, հիմնականում պարտատոմսեր ու ավանդներ, փոքր մասնաբաժին բաժնետոմսերում:
- **Հավասարակշռված** – բարձր ռիսկ, որտեղ կուտակումների մինչև կեսը կարող է ներդրվել բաժնետոմսերում:

Չիչիր. *Եթե դու չես ընտրում ֆոնդ ու կառավարիչ, համակարգը ավտոմատ քեզ կգրանցի պահպանողական ֆոնդում:*

Դու կարող ես նույնիսկ փոխել քո ֆոնդը՝ ընտրելով այն, որը ամավել համապատասխան է քո ռիսկի ախորժակին:

- Կարող ես փոխել ֆոնդը՝ նույն կառավարչի շրջանակում (անվճար):
- Կարող ես փոխել նաև կառավարչին. սա անվճար է տարեկան մեկ անգամ, իսկ ավելի հաճախ կոփոխելու դեպքում գանձվում է փոխանցվող գումարի 1% միջնորդավճար:

Դիմում կարող ես ներկայացնել.

- առցանց՝ **www.cda.am** կայքի «Իմ հաշիվը» բաժնում,
- կամ օպերատորի միջոցով՝ անձնագրով և սոցքարտով (կամ նույնականացման քարտով):

Արամ. *Իսկ ինչպե՞ս իմանամ՝ որքան են կուտակումներս:*

Ֆինանսական գուրու. *Կան մի քանի տարբերակներ.*

- Օպերատորի մոտ՝ անձնագրով և սոցքարտով դիմում ես լրացնում:
- Առցանց **www.cda.am**-ում՝ «Իմ հաշիվը» համակարգով: Պետք է ունենաս նույնականացման քարտ և քարտ ընթերցող սարք:
- **Բանկոմատներում՝** PIN կոդը մուտքագրելուց հետո ընտրում ես «Լրացուցիչ ծառայություններ» → «Կենսաթոշակային քաղվածք»:
- **Բջջային հավելվածներում՝** որոշ բանկերի մոբայլ բանկինգներում տեսանելի է քո կենսաթոշակային հաշվի մնացորդը:

Վերջաբան

Այս ընթացքում Արամը հասկացավ, որ ներդրումները կարող են ունենալ տարբեր ձևեր՝ ավանդներ, պարտատոմսեր, բաժնետոմսեր, անշարժ գույք և այլ հնարավորություններ: Նա սովորեց, որ բարձր եկամուտը միշտ ուղեկցվում է բարձր ռիսկերով, և հաջողության բանալին ճիշտ ընտրության, դիվերսիֆիկացիայի ու համբերության մեջ է: Գուրուի գլխավոր պատգամը պարզ էր. ներդրումների աշխարհում արագ հարստանալու հրաշք ճանապարհ չկա. կայուն արդյունքը ձեռք է բերում նա, ով մտածում է երկարաժամկետ և իր գումարը դարձնում է աշխատող:

Արամը սկսեց մտածել ոչ միայն միջնաժամկետ կամ կարճաժամկետ ներդրումների մասին, այլև ամենաերկարաժամկետը՝ իր ապագա կենսաթոշակը: Նա հասկացավ, որ կենսաթոշակը նույն սկզբունքներով է աշխատում, ինչ համակարգված խնայողությունները, երկարաժամկետ պլանավորումը և համբերությունը:

Գործնական աշխատանք

Թեստ. Գնահատիչ քո ռիսկի ախորժակը

Տրված 3 հարցերի համար ընտրիր այն պատասխանները, որոնք ձեզ ամենահամապատասխանն են.

Հարց 1. Եթե քո ներդրումներից մեկում 1 տարվա ընթացքում 10%-ով կորստի հավանականություն կա ...

- ա) Խուսափում եմ ներդրումից (0 բալ)
- բ) Մի փոքր անհանգստանում եմ, բայց ընդունում եմ ռիսկը (1 բալ)
- գ) Ինձ համար խնդիր չի հարուցում 10% կորուստը (2 բալ)

Հարց 2. Քո հիմնական նպատակը ներդրում կատարելիս...

- ա) Պաշտպանել գումարը գնաճից, փոքր եկամուտ ստանալ (0 բալ)
- բ) Հավասարակշռել ռիսկն ու եկամուտը (1 բալ)
- գ) Արժեքի աճի մեծ հնարավորություն ունենալ, պատրաստ եմ կորցնել նույնիսկ մի մասը (2 բալ)

Հարց 3. Եթե շուկան անկայուն է մեկ ամիս, դու...

- ա) Վաճառում եմ արժեթղթերս (0 բալ)
- բ) Սպասում եմ շուկայի կայունացմանը (1 բալ)
- գ) Ոչինչ չեմ անում, վստահ եմ երկարաժամկետ աճի վրա (2 բալ)

Արդյունքների գնահատում

- 0–2 բալ → դու ունես ցածր ռիսկի ախորժակ
- 3–4 բալ → դու ունես միջին ռիսկի ախորժակ
- 5–6 բալ → դու ունես բարձր ռիսկի ախորժակ

Առաջադրանք. Ընտրիչ լավագույն ներդրումը

Քեզ առաջարկվում է 1 000 000 դրամ ներդնելու երկու տարբերակ:

Առաջին տարբերակը՝ բանկային ավանդ.

- գումար՝ 1 000 000 դրամ
- ժամկետային ավանդ՝ 1 տարի
- տոկոսադրույք՝ 7% տարեկան, տոկոսները հաշվեգրվում են ամսական կտրվածքով բարդ տոկոսի բանաձևով

Երկրորդ տարբերակը՝ ընկերության բաժնետոմս.

- գումար՝ 1 000 000 դրամ
- եկամտաբերություն՝ տարեկան 15%

